Azg Ազգ

15 ՅՈՒՆՈՒԱՐ 2011 ՇԱԲԱԹ 5(4624)

ISSN: 1829-1651

Ոչնչացնելով Հին Զուղայի խաչքարերը՝ Ադրբեջանը ոչնչացրել է հայ մշակութային սեփականությունը

Ժնեւում հունվարի 13-ին կայացել է«Մշակութային սեփականության տնտեսություն» թեմայով գիտաժողովների շարքի հերթական հանդիպումը, որը կազմակերպել էր Մշակութային սեփականության համաշխարհային կազմակերպությունը: Հրավիրված են եղել 40 երկրների ներկայացուցիչներ: Հայաստանը ներկայացրել է Քաղաքական զարգացումների հետազոտական կենտրոնի Ֆրանսիայի մասնաճյուղի տնօրեն, քաղաքագետ **Սասուն Հովհաննիսյանը**, որի ելույթի մեծ մասը վերաբերել է Հին Զուղայի խաչքարերի ոչնչացմանը, որն իրականացրել է Ադրբեջանը, եւ սա նույնպես փաստ է հայ մշակութային սեփականության ոչնչացման: Սասուն Հովհաննիսյանը նշել է, որ այս փաստին քաղաքակիրթ մարդկությունը դեռեւս չի տվել իր գնահատականը:

Ի. Պ.

Հայաստանը միշտ ասում է այն, ինչ անում է, եւ անում է այն, ինչ ասում է

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Հենց այս ընդհանրականով երեկ արտաքին գործերի նախարարությունում անցած տարվա գործունեությունն ամփոփեց նախարար **Էդվարդ Նալբանդյանը**: Հայաստանի գլխավոր դիվանագետի խոսքերով՝ 2010-ին եւս մեկ անգամ ապացուցվեց, որ ինչպես ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման, այնպես էլ հայ-թուրքական հարաբերությունների մասով ՀՀ դիրքորոշումը համահունչ է միջազգային հանրության դիրքորոշմանը. «Այս մասին վկայում են անցած տարվա հունիսի 26-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարների Մուսկոկայում արած համատեղ հայտարարությունը, Աստրախանի եռակողմ՝ Սարգսյան-Մեդվեդեւ-Ալիեւ հռչակագիրը, Աստանայի հնգակողմ հայտարարությունը եւ այլն», ընդգծեց Նալբանդյանը: Նշենք, որ այդ բոլոր հայտարարություններով ու հռչակագրերով ամրագրվում է, որ ղարաբաղյան հիմնահարցը պետք է լուծվի նախ բացառապես խաղաղ բանակցությունների ճանապարհով, այնուհետեւ՝ բոլոր երեք սկզբունքները՝ ուժի կամ դրա սպառնալիքի կիրառման բացառում, ինքնորոշման իրավունք եւ տարածքային ամբողջականություն, որպես մեկ ամբողջություն ընդունելով: Այս առումով, իրոք, ակնհայտ է, որ Ադրբեջանը ամեն խոսափողից նախ հոխորտում է պատերազմ սկսելու իր պատրաստակամության, ապա նաեւ, որպես կարգավորման միակ սկզբունք, տարածքային ամբողջականության մասին: Հետեւաբար՝ հրապարակավ արտահայտում է իր անհամաձայնությունը միջազգային հանրությանը: Ընդ որում, նույնիսկ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը պատմական առումով ամենեւին էլ չի վերաբերում Ղարաբաղին: «Հայաստանը, անցած տարում իր ակտիվ արտաքին քաղաքականության շնորհիվ դառնալով միջազգային հանրության համար վստահելի գործընկեր, բազմիցս է հայտնել, որ ղարաբաղյան հիմնահարցի լուծման ուղղությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկած երեք սկզբունքներն ու վեց դրույթները ընդունում է որպես բանակցությունների հիմք, իսկ թե ինչ է ասում Ադրբեջանը, կարծում եմ, չեն հասկանում անգամ իրենք՝ ադրբեջանցիները. մենք ասում ենք այո՛ սկզբունքների ամբողջականությանը, նրանք ասում են՝ այո՛, բայց...», նշեց նախարարը: Ի դեպ, հակամարտության լուծման թերեւս ամենակարեւոր երկու հարցերի՝ ԼՂ վերջնական կարգավիճակի եւ տարածքների վերադարձի կապակցությամբ Նալբանդյանը նկատեց, որ բանակցությունների սեղանին դրված այսօրվա վեց դրույթների մեջ չնայած կա տարածքներ վերադարձնելու դրույթը, սակայն «հստակեցված չէ, թե ի՞նչ տարածքներ են դրանք կոնկրետ»: Ինչ վերաբերում է ԼՂ կարգավիճակի որոշմանը, ապա. «Դրույթներից մեկում հստակ սահմանված է, որ ԼՂ վերջնական կարգավիճակը պետք է որոշվի ԼՂ ժողովրդի ազատ կամարտահայտությամբ, ինչը կընդունվի միջազգայնորեն, իսկ մինչ այդ Ղարաբաղը պետք է ունենա միջանկյալ կարգավիճակ, այսինքն՝ այն կարգավիճակը, որն այսօր կա, որը նույնպես ընդունելի կլինի միջազգային հանրության կողմից», ասաց Նալբանդյանը: Հարցին, թե որքանո՞վ կարող է այս օրերին ընթացող աֆրիկյան

Սուդանի հարավում ընթացող անկախության հետաձգված հանրաքվեն նախադեպ լինել ԼՂ-ի համար, Հայաստանի արտգործնախարարը դիպուկ պատասխան տվեց. «Վստահաբար այսօր ՄԱԿ-ի անդամ 190 երկրները կարող են նախադեպ լինել Ղարաբաղի համար: Սուդանը այդ նախադեպերից մեկն է ընդամենը, երբ հերթական անգամ բացահայտվեց, թե ինչ ուղղությամբ է գնում միջազգային հանրությունը»:

Տես էջ 3

ԱՅԺ

Նախագահը ոգեսական այցով կմեկնի Կիպրոս եւ Հունաստան

Նախագահ Սերժ Սարգսյանը հունվարի 17-ին ոգեսական այցով կմեկնի Կիպրոսի Հանրապետություն, իսկ հունվարի 18-ին կմեկնարկի նախագահ Սարգսյանի ոգեսական այցը Հունաստանի Հանրապետություն: Կիպրոսի Հանրապետություն այցի շրջանակներում Սերժ Սարգսյանը հանդիպումներ կունենա երկրի նախագահ Դեմետրիս Խրիստոֆիասի, արքեպիսկոպոս Խրիստոդոմոս Երկրորդի, Կիպրոսի Ներկայացուցիչների պալատի նախագահ Մարիոս Գարոյանի հետ: Հանրապետության ղեկավարը նաեւ կմասնակցի հայ-կիպրական գործարար համաժողովի բացմանը: Կիպրոսում Սերժ Սարգսյանը կհանդիպի հայկական համայնքի ներկայացուցիչների հետ: Այցի վերջին օրը՝ հունվարի 18-ին, նախագահը Լառնակա քաղաքում ծաղկեպսակ կդնի Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանին եւ կմեկնի Հունաստանի Հանրապետություն: Հունաստանում նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպումներ կունենա նախագահ Կառլոս Պապուլիասի, Աթենքի եւ համայն Հունաստանի արքեպիսկոպոս Հիերոնիմոս II-ի, խորհրդարանի նախագահ Ֆիլիպոս Պեցալնիկոսի, վարչապետ Յորգոս Ա. Պապանդրեուի հետ: Աթենքում հանրապետության ղեկավարը կհանդիպի նաեւ Սփյուռքում գործող ավանդական հայկական կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

Հ. Ա.

Սիցիլիայում արթնացել է Էտնա հրաբուխը

Իտալիայի Սիցիլիա կղզում վերջին երկու օրերին տեղի են ունեցել Էտնա հրաբխի մի շարք ժայթքումներ: Հունվարի լույս 13-ի գիշերը սկսված ամենամեծ ժայթքումը տեւել է մոտ երկու ժամ եւ տեղական իշխանություններին ստիպել է փակել հրաբխի մերձակայքում գտնվող Կատանիա եւ Սիգոնելլա քաղաքների օդանավակայանները:

ANSA լրատվական գործակալությունը հաղորդում է, որ հրաբխի հարավարեւելյան խառնարանից արտանետված շիկացած լավայի հոսքը լեռան արեւելյան լանջով հասել է անբնակ Վալիե դել Բովե հովիտ: Մինչեւ 60 մետր բարձրությամբ արտանետվել են խոշոր քարեր:

Ավելի ուշ հրաբխի ակտիվությունը փոքր-ինչ թուլացել է, եւ օդանավակայանները վերսկսել են աշխատանքը: Հաղորդվում է, որ Էտնայի ակտիվությանը հետեւում էին Երկրաբանության եւ հրաբխագիտության ազգային ինստիտուտի Կատանիայի նահանգային բաժանմունքի մասնագետները:

Էտնան, որի բարձրությունը 3338 մետր է, Եվրոպայում գործող հրաբուխների մեջ համարվում է ամենաակտիվը եւ ամենամեծը: 2008-ի մայիսին եւ 2007-ի նոյեմբերին տեղի էին ունեցել լավայի եւ մոխրի համեմատաբար փոքր արտանետումներ: Հիշարժան է 2002-ի խոշոր ժայթքումը, երբ Էտնայից արտանետված մոխիրը հասավ Սիցիլիայից 600 կմ հեռու գտնվող Լիբիայի տարածք:

Էտնայի շրջակա հողերն արգավանդ են եւ հարուստ են օգտակար հանածոներով:

Ս. Հարության տոնն այս տարի ապրիլի 24-ին է

Այս տարի Ս. Հարության տոնը համընկել է Մեծ եղեռնի բյուրավոր նահատակաց հիշատակի օրվա հետ:

Հարության տոնը հաղթանակն է ողջ մարդկության ընդդեմ չարիքի, հաղթանակն է Աստծո՝ ընդդեմ մահվան:

Հարության հույսով վերընձյուղվում է մեր մեջ կյանքի հավիտենականությունը:

Այս տարի ողջ քրիստոնյա աշխարհը՝ թե լատին, թե հույն, թե հայ առաքելական եկեղեցին, Ս. Հարության տոնը միեւնույն օրն է նշում: Կարծես մարտահրավեր է նետվում անարգ թշնամուն, թե «Մահը կուլ գնաց հաղթության: Ո՞ւր է, մահ, քո հաղթությունը: Ո՞ւր է, գերեզման, քո խայթոցը» (Կորնթ. 15:54-55):

Աստվածային նախախնամությամբ, կարծես թե, բոլոր ազգերը աղոթքի ձայն կբարձրացնեն ի հիշատակ Հայոց մեծ եղեռնի անմեղ նահատակների հոգիների փրկության համար:

Արարատյան հայրապետական թեմի մամլո դիվան

Վերջին ժամ

Երեկ ուշ գիշերին պաշտոնապես հաստատվեց լուրը, թե Թունիսի նախագահ Բեն Ալին լքել է երկիրը շուրջ 1 ամիս տեւած համաժողովրդական ընդդիմության ճնշումների տակ: Մինչ մեկնելը Բեն Ալին արտակարգ դրություն էր հայտարարել երկրում: Ավելի ուշ վարչապետ Մոհամեդ Գաննուշին հայտարարեց, որ նախագահն այլեւս ի վիճակի չէ շարունակելու իր պարտականությունները եւ թե ինքը նախագահի պաշտոնակատար է ցնոր տնօրինություն: Ըստ ֆրանսիական աղբյուրների, Բեն Ալին փախուստ է տվել Մալթա: Նա երկիրը ղեկավարում էր արդեն 23 տարի:

Նազարբաեւը «կթագավորի»

Երեկ Ղազախստանի խորհրդարանի երկու պալատների համատեղ նիստի արդյունքում հաստատվել է, որ գործող նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը հնարավորություն կունենա շարունակելու իր լիազորությունները մինչեւ 2020-ը, եթե դա հաստատի ժողովրդական հանրաքվեն: Սա նշանակում է, որ Ղազախստանում 2012-ին, երբ կավարտվի Նազարբաեւի նախագահության այս ժամկետը, հնարավոր է եւ չկայանա նախագահական ընտրություններ:

Հիշեցնենք, որ «Ելբասին» ղեկավարում է Ղազախստանն արդեն 20 տարի (անկախությունից ի վեր):

Ինչպե՞ս եւ որքա՞ն են աճել գները 2010-ին

2010-ի հունվար-դեկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ապրանքների եւ ծառայությունների գներն աճել են 8,2 տոկոսով, իսկ 2010-ի դեկտեմբերին՝ 2009-ի դեկտեմբերի նկատմամբ, 9,4 տոկոս: Այս ցուցանիշներն է արձանագրել ազգային վիճակագրական ծառայությունը: Ակնհայտ է, որ վերջին տարիներին գնաճի նման բարձր տեմպ Հայաստանում չէր եղել:

Պարենային ապրանքների գները 2010-ի ընթացքում աճել են 9,4 տոկոսով, ոչ պարենային ապրանքների գներն աճել են 9,6 տոկոսով, ծառայություններինը՝ 6,8 տոկոսով: Առավել մանրամասն ներկայացնենք պարենային ապրանքների գների հետ տեղի ունեցածը վերջին 1 տարվա ընթացքում:

Մի շարք պարենային ապրանքների գները 2010 դեկտեմբերին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ աճել են անգամներով՝ սմբուկինը՝ 3,3 անգամ, վարունգինը՝ 2 անգամ, կանաչ պղպեղինը՝ 2,1 անգամ, լոլիկինը՝ 1,7 անգամ: Բանջարեղենի գներն ընդհանուր առմամբ, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ աճել են 30,7 տոկոսով:

Մրգերի գները 2009-ի դեկտեմբերի համեմատ 2010-ին աճել են 19 տոկոսով, այդ թվում՝ խաղողի գինը՝ 22,5 տոկոսով, նռանը՝ 24,5 տոկոսով, խնձորինը՝ 42,1 տոկոսով, տանձինը՝ 47,8 տոկոսով:

Մրգերի եւ բանջարեղենի շուկայում արձանագրված բարձր գնաճը հիմնականում պայմանավորված էր անբարենպաստ գյուղատնտեսական տարով: Նման մեծ անկում Հայաստանի գյուղատնտեսության մեջ վերջին տարիներին չէր արձանագրվել: Հարկ է նաեւ նշել, որ կոնկրետ մրգերի եւ բանջարեղենի գների աճը հիմնականում պայմանավորված է օբյեկտիվ գործոններով, քանի որ, ի տարբերություն այլ ապրանքային շուկաների, այստեղ չկան գերիշխող դիրք ունեցողներ, եւ գործում են տասնյակ հազարավոր գյուղացիական տնտեսություններ:

Ձվի գներն են անցյալ տարվա ընթացքում նկատելիորեն աճել՝ 25,7 տոկոսով: Այստեղ հարկ է երկու հանգամանք ընդգծել: Նախ՝ վիճակագրության ծառայության ներկայացրած ցուցանիշից այնքան էլ պարզ չէ, թե այդ գնաճի մեջ հաշվի առնվե՞լ են դեկտեմբերի վերջին օրերին ձվի գնի դեֆիցիտն ու կրկնակի աճը: Երկրորդ, այս շուկայում իսկապես մրցակցային սահմանափակումներ կան, որի մասին խոսվանում է երկրի բարձրագույն ղեկավարությունը, ուստի այստեղ արձանագրված գնաճը մեծապես սուբյեկտիվ պատճառներ ուներ:

Մսամթերքի գներն աճել են 17,6 տոկոսով, կաթնամթերքինը՝ 21,1 տոկոսով, կենդանական եւ բուսական յուղերինը՝ 10,9 տոկոսով:

Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած մեկ այլ տեղեկատվության համաձայն, 2010-ի հունվար-դեկտեմբեր ամիսներին գների միջին ամսական հավելաճը կազմել է 0,8 տոկոս, ինչը 0,3 տոկոսով գերազանցել է 2009-ի նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը:

Ինչ վերաբերում է վերջին 5 տարվա ընթացքում արձանագրված գների ինդեքսի փոփոխություններին, ապա 2005-ի դեկտեմբերի համեմատ սպառողական գների աճը կազմել է 37,7 տոկոս, այդ թվում՝ պարենային ապրանքներինը՝ 44,3 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 26,1 տոկոս, իսկ ծառայություններինը՝ 39,9 տոկոս:

Հարկ ենք համարում տեղեկացնել, որ գների ինդեքսը ազգային վիճակագրական ծառայությունը որոշում է՝ հիմք ընդունելով շուրջ 500 ապրանքների եւ ծառայությունների գների դինամիկան:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ի՞նչ կա «Ֆրիդոմ հաուզի» գնահատականի տակ

Ամերիկյան ոչ կառավարական «Ֆրիդոմ հաուզ» կազմակերպության մեկ or առաջ հրապարակված զեկույցում աշխարհի ճանաչված պետություններեր եւ չճանաչված միավորումների մեջ Լեռնային Ղարաբաղը ճանաչվել է «ոչ ազատ» երկրների շարքում, այն դեպքում, երբ մինչեւ այժմ եւ ընդամենը 6 ամիս առաջ «մասամբ ազատ» էր ճանաչվում: «Ֆրիդոմ հաուզը», փաստորեն, այս անգամ Ղարաբաղին դրել է նույն հարթության մեջ, որտեղ միշտ Ադրբեջանին է դրել: Այս գնահատականի մասին հայտնայան եւ ղարաբաղյան քաղաքական գործիչների գնահատականները մտահոգություններ պարունակում են: Մի մասի կարծիքով՝ «Ֆրիդոմ հաուզի» գնահատականներն, այնուամենայնիվ, ոչ միայն եւ ոչ թե գնահատական են ներկայացնում, այլ աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում են: Մանավանդ, ԼՂՀ նախկին արտգործնախարար **Արման Մելիքյանի** կարծիքով, այս տարի ակնկալվում են աշխարհաքաղաքական բնույթի այնպիսի գործընթացներ եւ որոշումներ, որոնք իրենց անդրադարձը կունենան ղարաբաղյան հարցի կարգավորման ժամկետների եւ ուղիների ճշման վրա:

Փորձելով ամերիկյան կազմակերպության գնահատականի տակ գտնել քաղաքական շարժառիթներ, մեր քաղաքական գործիչները տարբեր տեսանկյուններից էին մոտենում խնդրին: Մի մասը պնդում էր, որ այդպիսի գնահատականի համար հիմք կա՝ ԼՂՀ պառլամենտում ընդդիմություն չկա, եւ ընդհանրապես Ղարաբաղի իշխանությունները պետք է դրանից հետեւություններ անեն (**Մանվել Սարգսյան**), քանի որ այդպիսի զեկույցը կարող է անդրադարձներ ունենալ ԼՂ հարցի կարգավորման գործընթացի վրա՝ չէ՞ որ բանակցային գործընթացին մասնակցելու ցանկություն ունեցող Ղարաբաղը որպես իր առավելություն միշտ նշում է ավելի ժողովրդավար երկիր լինելը Ադրբեջանի համեմատությամբ:

ՀՀԿ փոխնախագահ **Ռազմիկ Զոհրաբյանը** գնահատականը ճնշման ձեւ է համարում բանակցային գործընթացի վրա՝ հայերից զիջումներ կորզելու եւ Ղարաբաղին բանակցային սեղանի մոտ չթողնելու համար, մանավանդ որ Արեւմուտքը ձգտում է արագ կարգավորման, մինչդեռ բանակցություններում, փաստ է, որ առաջընթաց չկա, Աստանա դա ցույց տվեց: Ղարաբաղի նախկին փոխարտգործնախարար **Մասիս Մայիլյանն** էլ Արցախում ժողովրդավարության որոշակի անկում նկատում է. ընդգծելով հատկապես ժողովրդավարության զարգացման՝ ԼՂ արտաքին քաղաքական կարեւոր նշանակությունը, նա անհարժեշտ է գտնում, որ ԼՂ քաղաքական կուսակցությունները եւ հասարակությունը Արցախը զերծ պահեն վտանգավոր միտումներից:

Եթե նկատի ունենանք, որ երեկ ադրբեջանական կայքերում տեղեկություն կար, թե Եվրոհանձնաժողովի ղեկավար Բարոզուն Ալիեւի հետ քննարկել է հակամարտության ժամանակ տուժած մարդկանց ճակատագրերի վերաբերյալ մտահոգությունները եւ թե՝ Եվրոհանձնաժողովից (եվրոպական կառույցներից) պատրաստ են տեխնիկական աջակցություն բերել ենթակառուցվածքների վերականգնմանը կարգավորումից հետո՝ կարգավորման վերջնական համաձայնագիրը երբ ստորագրված լինի, սա կարելի է հետաքրքրական զուգադիպություն համարել Արեւմուտքից եւ Եվրոպայից ստացվող միաժամանակյա մեսիջների առումով: Չնայած մեր արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը** երեկ կրկին խորհուրդ տվեց ադրբեջանական կայքերին չվստահել՝ ԵՄ-ն աջակից է Մինսկի խմբի համանախագահների սկզբունքներին ու ԵՄ կայքերը պետք է նայել, ոչ թե ադրբեջանական աղբյուրները: Բայց հո՞ նույն Բարոզոն, այս ասած-չասածից մեկ or առաջ էլ Ալիեւի հետ Բաքվում հարավային գազային միջանցքի մասին Ռուսաստանը շրջանցող համաձայնություն է կնքել («Նաբուկկո» ներառող), որն իրականություն դառնալու դեպքում, ըստ տարբեր փորձագիտական գնահատականների, ի վերջո իր անդրադարձը կունենա ողջ Կովկասում իրականացվող մեծ խաղացողների քաղաքականության վրա: Իսկ Բաքուն էլ կարող է այս համաձայնագրի կնքումից հետո սպասումներ ունենալ Եվրամիությունից՝ ղարաբաղյան ուղղությամբ հայկական կողմի վրա ճնշումների առումով: Գազային նախագծից դուրս մնացած Ռուսաստանն էլ ձեռքերը ծալած չի նստի, այնպես որ այս նախագիծը կարող է հերթական դիմակայության պատճառ դառնալ, եթե, իհարկե, իրականություն դառնա եւ մինչեւ իրականություն դառնալը՝ դրան խանգարող ջանքերի առումով, քանի որ նախագծի չուզողները շատ են: Իսկ դիմակայության կիզակետում ղարաբաղյան խնդիրը կլինի՝ պրոյեկտվելով նաեւ Հայաստանի վրա, եւ եվրոպական, եւ ռուսական, եւ ամերիկյան մրցակցությունը կարող է նոր դրսեւորումներ ունենալ այս առումով: Ինչեւէ, պետք է հետեւել զարգացումներին, քանզի նավթագազային շահերը միշտ էլ կարող են պարզ եւ կանխատեսելի իրավիճակը Ղարաբաղի շուրջն այլ ուղղությամբ հրել:

Մ. Խ.

Ամերիկայի հայկական համագումարը վրդովված է Գիֆորդսի դեմ մահափորձի առնչությամբ

«Ամերիկայի հայկական համագումարը խորապես ցավում է հունվարի 8-ին Արիզոնա նահանգի Տուսոն քաղաքում կատարված ազգային ողբերգության առնչությամբ, որի ընթացքում 6 մարդ է զոհվել եւ 13 հոգի վիրավորվել, նրանց թվում՝ կոնգրեսական Գաբրիելա Գիֆորդսը: Այս նողկալի արարքը պետք է բոլորի համար ազդանշան լինի, թե ինչ կարող է տեղի ունենալ, երբ անհանդուրժողականության մթնոլորտ է ձեւավորվում: Մենք խորապես վշտացած ու վրդովված ենք, որ նման հանցագործություն կատարվեց, բայց հույս ենք փայփայում, որ կոնգրեսական Գիֆորդսը շուտով կապաքինվի եւ կվերադառնա իր պարտականությունները Արիզոնայի 8-րդ ընտրատարածքում: Նա մարդու իրավունքների եւ ցեղասպանության կանխարգելման հարցերում սկզբունքային էր եւ երկու անգամ (2007-ին եւ 2010-ին) կողմ է քվեարկել Հայոց ցեղասպանության բանաձեւի ընդունման քվեարկություններում», ասված է Ամերիկայի հայկական համագումարի գրասենյակից ստացված մամլո հաղորդագրության մեջ:

Հ. Ծ.

Քաղաքաշինարանում քննարկվել է բնակֆոնդի կառավարման խնդիրը

Բազմաբնակարան շենքերի կառավարման, շահագործման եւ սպասարկման ռազմավարական ծրագրի հիմնական մոտեցումները ձեւակերպելու եւ հստակեցնելու նպատակով երեկ Երեւանի քաղաքաշինարանում կազմակերպվել էր աշխատանքային քննարկում, որին մասնակցում էին համաշիրությունների նախագահներ, ոլորտի խնդիրներով զբաղվող ՀԿ-ների եւ կառավարության կողմից ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի ներկայացուցիչներ: Փոխքաղաքաշինարար **Կամո Արեյանը**, որը վարում էր քննարկումը, ներկայացրեց Երեւանի քաղաքաշինարան Կարեն Կարապետյանի մոտեցումը հարցի վերաբերյալ՝ պետականորեն աջակցել եւ խրախուսել համեմատաբար արդյունավետ աշխատող համաշիրություններին, միաժամանակ բարեփոխելով շենքերի կառավարման գոյություն ունեցող համակարգը:

Կառավարության հնգամյա ռազմավարական ծրագրով նախատեսվում է շենքերի կառավարման նոր մոդելի ձեւավորում: Օրենքով սահմանված կարգով, յուրաքանչյուր շենքում սեփականատերերի ժողովը կընտրի կառավարիչ, ով կունենա առեւտրային գործունեությամբ զբաղվելու իրավասություն: Վերջինը պարտավոր է հոգ տանել շենքի նորոգման եւ սպասարկման համար, իսկ այդ նպատակով օգտագործվելիք միջոցները կգոյանան ինչպես վարձավճարների հավաքագրումից, այնպես էլ բազմահարկ շենքի ընդհանուր բաժնային սեփականության արդյունավետ բիզնես կառավարումից: Բնակֆոնդի կառավարման նոր մոդելի ներդրումը ենթադրելու է օրենսդրական փոփոխություններ, իսկ ներկայացվող ծրագիրը մշակվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ՝ հիմնված մեր երկրում կատարված ուսումնասիրությունների եւ Արեւելյան Եվրոպայի երկրների փորձի վրա:

Կամո Արեյանն ընդգծեց, որ թեեւ բնակֆոնդի պահպանումն ու վերանորոգումը բնակարանների սեփականատերերի պարտականությունն է, այնուամենայնիվ առաջարկվող ծրագրով նախատեսվում է նաեւ պետական աջակցություն, որը կլինի նպատակային լրավճարների տեսքով: Ծրագրի իրականացման մեկնարկը կտրվի արդեն այս տարվանից, ընդ որում արդեն իսկ նախատեսված են 2011-2012 թթ. միանվագ պետական ֆինանսավորմամբ շենքերի ենթակառուցվածքների վերականգնման միջոցառումներ: Պետական սուբսիդավորման մեխանիզմը կներդրվի 2014 թ.: Համաձայն ծրագրի, նախատեսվում է ներդնել նաեւ բնակարանային նպաստի ծրագիրը, որը կհատկացվի սոցիալապես անապահով խավերին:

Վերջնական շտկումներից հետո բնակելի ֆոնդի կառավարման ռազմավարական ծրագիրը կներկայացվի կառավարության հաստատմանը: Այս մասին տեղեկացնում է Երեւանի քաղաքաշինարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունը:

Մ. Խ.

ԲՈՂՈՔԱՎՈՐ

Կարապետիչ. «ԱԼՄ-ն դարձել է քավության նոխազ»

ԱԼՄ-ին եթերազրկելու որոշումը բնութագրելով բացառիկ ցինիկ անարդարություն, Տիգրան Կարապետյանը խոստովանում է, որ ՀՌԱՀ-ի որոշումից անակնկալի չի եկել: «Հայտը տալուց 10 or անց արդեն գիտեի, որ հեռուստաընկերությունը փակվելու է»:

Կարապետիչը վստահ է՝ ԱԼՄ-ն դարձել է քավության նոխազ. մրցույթ որպես այդպիսին չի եղել, որովհետեւ տուժել է միայն իր ղեկավարած հեռուստաընկերությունը: «Շողակաթ»ի հաղորդումները կհեռարձակվեն «Արարատ» հեռուստաալիքով, «Հայրենիքը» փակում են, բայց կա «ԱՐ»-ը, «TV5»-ը փակում են, բայց կան «Արմնյուզն» ու «Արմենիան»: Միակ տուժածը՝ «ԱԼՄ»-ն:

ՀՌԱՀ-ի դեմ հեռուստաընկերության աշխատակազմը հայց է ներկայացրել: Կարապետյանը կոլեկտիվ հայցին չի մասնակցել. չի ցանկանում մանրանալ: «Մեղադրելու եմ մինչեւ վերջ», երեկ ասաց նա «Հայելի» ակումբում:

Հունվարի 20-ից հեռուստաընկերությունը կեթերազրկվի: Դա նշանակում է, որ հեռուստաընկերության 84-հոգանոց կազմը կդառնա գործազուրկ: Որոշված չէ, թե վերջին օրվա եթերն ինչպիսին է լինելու: «Արտառոց ոչինչ չի լինի, հրաժեշտ կտանք»: Դրա փոխարեն հունվարի 19-ին Մատենադարանի մոտ տեղի կունենա Ժողովրդական կուսակցության հանրահավաքը: Կարապետյանը կխոսի ոչ միայն ԱԼՄ-ին եթերազրկելու, այլեւ քաղաքական պահանջների մասին:

Հայ ազգային կոնգրեսն էլ հունվարի 18-ին է հանրահավաք կազմակերպելու: Կարապետիչի գնահատմամբ, եթե ՀԱԿ-ն իրենից չվախենար, մեկ or առաջ հանրահավաք չէր կազմակերպի:

Եթե Կարապետյանը բացառում է ՀԱԿ-ի հետ միավորումն ու «Երեւան TV»-ի հետ համագործակցությունը, ապա ԳԱԼԱ ու Ա1+ հեռուստաընկերությունների հետ ապագայում կլինի սերտ համագործակցություն: Ավելին՝ արդարության հասնելու համար կկազմակերպեն մարզային հավաքներ: Ժողովրդական կուսակցությունը, Կարապետիչի խոսքերով ունի 18.000 անդամ: Միայն վերջին 1 ամսվա ընթացքում 1000 հոգի է անդամագրվել: Կուսակցության նախագահն ասում է, որ իրեն աջակցում են այն մարդիկ, ովքեր պայքարում են արդարության վերականգնման համար:

Իրեն կեղծ ընդդիմություն անվանողներին էլ պատասխանում է. «Մաքուր, ազնիվ մարդ եմ, ես ընդդիմություն եմ»: Ավելին, Կարապետիչը համոզված է. ապագայում երկրում կլինի ընդամենը մեկ ուժ՝ ինքն ու ժողովուրդը: Իշխանությունն՝ իր բնորոշմամբ, ուժ չէ, խումբ է:

Կարապետյանն ԱԼՄ-ի եթերազրկումը չի առանձնացնում երկրում կատարվող բազմաթիվ անարդարություններից: Հենց երկրում կատարվող անարդարություններն են, որոնց պատճառով Կարապետիչը երկրի ապագան չի տեսնում: «Դրսում կրթություն ստացած երիտասարդները Հայաստան չեն վերադառնում: Հայաստանում բարձրագույն կրթություն ստացածներն էլ լքում են հայրենիքը: Մնում են կիսագրագետները, որոնք էլ ղեկավարում են երկիրը: Կառավարությունը կոնսենսուսի գործարանի տնօրենին նշանակում է գյուղնախարար: Լավ է գոնե՝ մանկապարտեզի տնօրենին չեն նշանակում նախարար»:

Հ. Հ.

Ծանուցում

Ժողովրդական կուսակցությունը, Տիգրան Կարապետյանի գլխավորությամբ, կազմակերպում է մարզային հանրահավաքներ՝ «Ոչ անարդարությանը, ոչ կամայականությանը, ոչ մենաշնորհին, ոչ բռնապետությանը» կարգախոսով: Մասնավորապես ս. թ. հունվարի 15-ին, ժամը 15:00-ին Վանաձորում՝ մարզպետարանի հարակից հրապարակում, հունվարի 16-ին, ժամը 15:00-ին Հրազդանում՝ Սահմանադրության հրապարակում եւ հունվարի 17-ին, ժամը 15:00-ին Գյումրիում՝ Վ. Աճեմյանի անվան թատրոնի հարակից տարածքում:

Ժողովրդական կուսակցության մամլո ծառայություն

Նորաբաց գրասենյակը կդառնա կենտրոնականը համայնքում

Նոր Նորքի վարչական շրջանում երեկ բացվեց «Օրինաց երկիր» կուսակցության նոր, համարավետ գրասենյակը: Բացման արարողությանը մասնակցում էին տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը, արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը, գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, Նոր Նորքի շրջանի կուսակցականները: Բացման խոսքով հանդես եկավ «Օրինաց երկիր» կուսակցության ղեկավար Արթուր Բաղդասարյանը: Շնորհավորելով իր կուսակիցներին, նա շեշտեց, որ նորաբաց գրասենյակը համայնքի կենտրոնական գրասենյակն է դառնալու: Արթուր Բաղդասարյանն իր շնորհակալությունը հայտնեց բոլոր նրանց, ովքեր աջակցել են գրասենյակի բացմանը, առանձնացնելով Մանուկ Վարդանյանին: Նոր գրասենյակի բացման առնչությամբ իրենց գոհունակությունը հայտնեցին նաեւ կուսակցությունը ներկայացնող նախարարները եւ համայնքի կուսակցականները:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Անցուդարձ

Ադրբեջանում կրկին «խորհրդավոր լռություն է»

Ինչպես ՄԱԿ-ի միջազգային դատարանի՝ Կոսովոյի վերաբերյալ ընդունած որոշումից հետո

Ամեն անգամ, երբ աշխարհի որեւէ կետում միջազգային հանրության լիակատար աջակցությամբ իրավաբանական կարգավիճակ է ստանում որեւէ ժողովրդի ինքնորոշման իրավունքը, հարեւան Ադրբեջանի իշխանական լրատվամիջոցները (այսինքն՝ գրեթե բոլորը) մեկ մարդու պես լռում են: Այս պատկերն էր անցյալ տարի, երբ ՄԱԿ-ի միջազգային դատարանը, սահմանելով, որ «երկրների տարածային ամբողջականությունը վերաբերում է բացառապես միջպետական հարաբերություններին, այդ սկզբունքը կոչված է պետությանը պաշտպանելու այլ պետության զինված ներխուժումից, եւ անկարելի է կիրառել՝ սեփական տարածքում ինքնորոշված ժողովրդի դեմ», մերժեց Սերբիայի հայցը ընդդեմ ինքնորոշված ու արդեն դե յուրե անկախ Կոսովոյի: Ադրբեջանի լրատվամիջոցները, եթե գրում էին այս թեմայով, ապա միայն հետեւյալ խորագրերով՝ «Սերբիան չի համաձայնի Կոսովոյի անկախությանը»: Նույն պատկերն է նաեւ այս օրերին. երեկ երեկոյան տվյալներով ադրբեջանական «առաջատար» կայքերը, որեւէ կերպ չէին անդրադարձել Հարավային Սուդանի հանրաքվեին, որով, հիշեցնենք, աֆրիկյան ամենամեծ երկրի հարավի բնակչությունը ժողովուրդը անկախանում է հյուսիսից: Ի դեպ, համաձայն սուդանյան հանրաքվեի նախնական տվյալների՝ հանրաքվեին մասնակցած հարավի բնակչության 60 տոկոսը անկախությանն ասել է «այո»:

Ադրբեջանական այս լռությունը ամենեւին էլ պատահական չէ. ամանորյա իր ամփոփումում Իլհամ Ալիեւը անձամբ հերթական անգամ «փայլելով պատմագիտական իր խոր գիտելիքներով»՝ «բոլորս էլ գիտենք, որ Հայաստանը ստեղծվել է պատմական ադրբեջանական հողերի՝ Իրեւանի ու Զանգեզուրի վրա, ու այժմ թույլ չենք տա, որ հայերը երկրորդ պետությունը ստեղծեն բուն ադրբեջանական Ղարաբաղում», ասել էր. «Ադրբեջանը հետ կբերի իր հողերը ամեն գնով ու այս առումով պատրաստ է յուրաքանչյուր ճանապարհի: Վստահեցնում եմ, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ճանաչած միջազգային հանրությունը մեզ հետ է»: Հիմա, փաստորեն, հարեւան երկրում պետք է բացատրեն սեփական ժողովրդին, թե այդ ինչպես է միջազգային հանրությունը իրենց հետ, երբ ակնհայտորեն նույն այդ հանրության ճնշումներով Հյուսիսային Սուդանը համաձայնեց հարավին տալ հանրաքվեի իրավունք, այն էլ բացառապես անկախության ձգտող ժողովրդի տարածքում: Ամեն ինչի համար Ալիեւ կրտսերի «գրավոր կամ բանավոր» համաձայնությանը սպասող ադրբեջանական ՁԼՄ-ները պետք է բացատրեն նաեւ, թե որ միակ ճանապարհը գոյություն ունի՝ էթնիկ վեճերը լուծելու համար, որքանո՞վ է երկրի տարածքային ամբողջականությունը զսպաբաթիկ ՄԱԿ-ի հիմնական սկզբունքներից՝ ազգերի ինքնորոշման համար եւ այլն, եւ բազմաթիվ այլ բաներ: Հենց այս ամենի պատճառով էլ Ադրբեջանում լռություն է, մանավանդ որ պաշտոնական Խարթումն էլ (Սուդանի հյուսիսի մայրաքաղաքը) արդեն իսկ հայտարարել է. «Մենք կընդունենք հարավի հանրաքվեի յուրաքանչյուր արդյունք»: Միակ հետաքրքրական հայտարարությունը, որը հնչել է երեկ հարեւան երկրում, հեղինակել է Եվրոմիության հանձնաժողովի նախագահ Բարոզուն: Եվրոպացի դիվանագետի խոսքերը մեջբերող ադրբեջանական «ԱՊԱ» գործակալությունը չի գրում, թե հստակորեն որ հարցին է Բարոզուն պատասխանել հետեւյալ կերպ. «Ադրբեջանը պետք է անվերապահորեն կատարի միջազգայնորեն ստանձնած իր պարտավորությունները, դա խիստ կարեւոր է»: Ինչեւէ, թողնենք ադրբեջանական պետությանը իր պարտավորությունների հետ եւ նշենք, թե ինչպես են մեկնաբանում սուդանյան հանրաքվեն օտարերկրացի փորձագետները եւ արդյո՞ք համարում են նախադեպ՝ ԼՂ հիմնահարցի լուծման համար:

Panorama.am-ին հարցազրույց է տվել ռուսաստանյան հեղինակավոր Ռազմավարական մտակոյթի հիմնադրամի գլխավոր տնօրեն Անդրեյ Արեբեւը, ըստ որի. «Հարավային Սուդանի պարագան ԼՂ հարցում միանշանակ դրական պետք է դիտարկել: Տեսեք՝ Սուդանի պարագայում ԱՄՆ-ի, Եվրոմիության եւ Ռուսաստանի դիրքորոշումները համընկան ու հերթական անգամ աշխարհը ականատեսը եղավ փաստի՝ թե ինչպե՞ս կարող է լինել արդի էթնիկ բնույթ կրող համակարգության միակ հնարավոր լուծումը»:

Մյուս կողմից, սակայն, ըստ ԼՂՀ նախկին արտգործնախարար Արման Մելիքյանի՝ «Հայաստանը չի կարող օգտվել Սուդանի նախադեպից, քանի որ չունի նախադեպերից օգտվելու փորձ»:

ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը իր հերթին երեկ կայացած ասուլիսում ընդգծեց. «ԼՂ հիմնահարցի լուծման համար Սուդանն ընդամենը վերջին նախադեպն է. ՄԱԿ-ի անդամ 190 պետություններն էլ կարող են նախադեպ լինել ղարաբաղյան հիմնահարցի լուծման գործում»: Այսպիսով հույս ունենանք, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ, Կոսովոյի անկախությունը ճանաչած, սակայն Աբխազիայինն ու Հարավային Օսիայինը չճանաչած ԱՄՆ-ը եւ Ֆրանսիան, ինչպես նաեւ վերջին երկուսի անկախությունը ճանաչած, բայց Կոսովոյինը չճանաչած Ռուսաստանը, միասնական դիրքորոշումը դրսեւորելով Հարավային Սուդանի ինքնորոշվող ժողովրդի առումով՝ նույնը կանեն նաեւ Ղարաբաղի պարագայում՝ առաջարկելով, իսկ ոմանց անգամ պարտադրելով «էթնիկ բնույթ կրող հակամարտության միակ հնարավոր լուծումը արդի աշխարհում»:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

Հայաստանը միշտ ասում է այն, ինչ անում է, եւ անում է այն, ինչ ասում է

1-ին էջից

Իսկ միջազգային հանրությունը, համենայն դեպս նրա՝ իրեն ու երեւույթները սեփական աչքերով տեսնել ցանկացող մասը Ղարաբաղ կատարած իր պարբերական այցերով հանգիստ չի տալիս Ադրբեջանին: Այս առումով Էդվարդ Նալբանդյանը, ողջունելով ԼՂՀ այցելած ու այցելող բոլոր օտարերկրացիներին, տրամաբանական հարցադրում արեց Բաքվին. «Իսկ ինչո՞ւ Ադրբեջանը չի թողնում, որ օտարերկրացիները այցելեն Նախիջեւան. դա էլ հո իր ենթակայության տակ է: Իսկ միգուցե Բաքուն վախենում է, որ նրանք, ովքեր կայցելեն Նախիջեւան ու կտեսնեն քրիստոնեական հուշարձանների անկումը, հանկարծ հարց կտան՝ իսկ ո՞ւր է այս ժողովուրդը...»:

Եզրափակելով ղարաբաղյան թեման՝ Նալբանդյանը հաստատեց, որ ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի նախաձեռնությամբ նախատեսվում է, որ հունվարի 24-ին Մոսկվայում կկայանա Նալբանդյան-Լավրով-Մամեդյարով եռակողմ հանդիպումը. «Հնարավոր է նաեւ, որ փետրվարի սկզբին հանդիպում կայանա Մինսկի խմբի եռանախագահների հետ», նշեց Նալբանդյանը:

Հայ-թուրքական հարաբերությունների մասով Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը եւս մեկ անգամ շեշտեց, որ Հայաստանը առաջ կգնա միայն այն ժամանակ, երբ Թուրքիան արտահայտի իր համապատասխան պատրաստակամության մասին. «Ի տարբերություն Անկարայի՝ Հայաստանը միշտ ասել է այն, ինչ արել է, եւ արել է այն, ինչ ասել է: Ու մեր քաղաքականությունը ստացել է միջազգային հանրության լիակատար ըմբռնումը», ընդգծեց Նալբանդյանը:

Ընդհանուր առմամբ 2010-ին, նախարարի խոսքերով նոր՝ ավելի բարձր մակարդակի են հասցվել ինչպես հայ-ռուսական, այնպես էլ հայ-ամերիկյան հարաբերությունները. «Ռուսաստանի հետ մեր հարաբերությունների ավելի սերտացման վկայություն են անցած օգոստոսին նախագահ Մեդվեդեւի առաջին պետական այցը Հայաստան եւ նախագահ Սերժ Սարգսյանի հետ ստորագրած համաձայնագրերը: Իսկ հայ-ամերիկյան հարաբերությունները որակական նոր մակարդակի բարձրացան պետքարտուղար Հիլարի Քլինթոնի Երեւան այցելությամբ, ինչպես նաեւ նախագահ Սարգսյանի՝ Վաշինգտոն կատարած այցով ու այնտեղ ունեցած հանդիպումով Բարաք Օբամայի հետ»: Ընդգծելով, որ Եվրոմիության հետ Երեւանի հարաբերությունները շարունակում են գերակա ուղղություններից համարվել Հայաստանի ԱԳՆ-ի համար՝ Նալբանդյանը նկատեց, որ մեր երկրի արտաքին քաղաքականության «եվրոպական ուղղությունը» եւս նոր մակարդակի է բարձրացվել: Նույնը, ըստ նախարարի, կարելի է ասել նաեւ Հայաստան-Վրաստան եւ Իրան-Հայաստան հարաբերությունների մասին: «Մենք ամրապնդում ենք մեր հարաբերությունները նաեւ ասիական երկրների, այդ թվում՝ արաբական աշխարհի, ինչպես նաեւ Լատինական Ամերիկայի պետությունների հետ: Խորանում է Հայաստան-ՆԱՏՕ գործակցությունը. մեր երկիրը մասնակից է Հյուսիսատլանտյան դաշինքի մի շարք միջոցառումների: Հայաստանը կարեւոր դերակատարում ունի նաեւ ՀԱՊԿ-ում», ասաց Նալբանդյանը:

Հայոց ցեղասպանության առումով նախարարը նշեց, որ այն համարելով իր օրակարգի անփակելի մաս՝ ՀՀ ԱԳՆ-ն աջակցել է աշխարհի չորս տասնյակից ավելի երկրներում անցած տարի՝ Ցեղասպանության 95-րդ տարելիցին նվիրված բազմաթիվ միջոցառումների անցկացմանը: Արտաքին գործերի նախարարը ընդգծեց նաեւ արտերկրում Հայաստանի դիվանագիտական նոր ներկայացուցչությունների բացումը՝ 2010-ին. «Մենք նոր դեսպանատներ ունեցանք Քուվեյթում, Չեխիայում, Բրազիլիայում, Նիդեռլանդներում», ասաց Էդվարդ Նալբանդյանը:

ԲԱՔՎԻ ՋԱՐԴԵՐԻ 21-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

«Ցեղասպանությունը պաշտոնական Բաքվի որդեգրած քաղաքականությունն է»

Այս տարի լրանում է Բաքվի ջարդերի 21-րդ տարելիցը: Բաքվի փողոցներում մարդկության դեմ հրեշավոր հանցագործություն տեղի ունեցավ. այստեղ ապրող ավելի քան 240 հազար հայեր ենթարկվեցին ջարդի, կոտորածի ու բռնի տեղահանման:

«Ժառանգություն» խմբակցության քարտուղար, ղարաբաղյան հարցով փորձագետ Լարիսա Ալավերդյանի խոսքով՝ այն, ինչ սկսվեց 21 տարի առաջ՝ հունվարի 13-ին Բաքվում, ցեղասպանություն է, որն առ այսօր չի ավարտվել. «Պետք է հասկանանք, որ ցեղասպանությունը պաշտոնական Բաքվի որդեգրած քաղաքականությունն է, որից նա ոչ միայն չի հրաժարվում, այլեւ կարծես թե հրճվում է, իսկ միջազգային հանրությունը լռության է մատնում այդ քաղաքականությունը, որը պաշտոնական Բաքուն նպատակ ունի վարելու նաեւ հետագայում»: Այսօր Ադրբեջանում դեռեւս հետաղնդվում են հայկական արմատներ ունեցող մարդիկ: Լ. Ալավերդյանը Բաքվի ջարդերը որակում է ցեղասպանություն, որն իրականացրել է իրեն Ադրբեջանական հանրապետություն կոչող մի պետության իշխանությունն: Լ. Ալավերդյանը նաեւ կարեւորում է, որ հայկական միտքն առ այսօր չի գնում այն ուղղությամբ, որ վերջապես սկսի իրավական եւ իրավաբանական մի գործընթաց, որով կպատժվեն ու պատասխանատվության կենթարկվեն բոլոր քաղաքական ուժերն ու առանձին անձինք, որոնք մեղավոր են մասսայական սպանությունների մեջ:

Երեկ «Նովոստի» մամուլի կենտրոնում ասուլիսի մյուս բանախոսը՝ Հայաստանի պետական միգրացիոն ծառայության պետ Գագիկ Եգանյանը, նշեց, որ Բաքվից Հայաստան են բռնագաղթել ավելի քան 220 հազար փախստականներ, որոնց կրած կորուստները մեղմելու նպատակով այստեղ քայլեր են ձեռնարկվել: Փախստականների տարաբնույթ խնդիրների մեջ շարունակում է կարեւոր խնդիր մնալ բնակարանային ապահովությունը: Գագիկ Եգանյանի փոխանցմամբ՝ 1994 թվականից միջազգային դոնոր հանրությունը Ադրբեջանից բռնագաղթած բոլոր փախստականների համար կառուցել է 4485 բնակարաններ: 712 ընտանիքներ էլ սեփականաշնորհել են հանրակացարաններում իրենց զբաղեցրած սենյակներն ու տարածքները: Գ. Եգանյանը նաեւ տեղեկացրեց, որ 2004-ից կառավարությունն իրականացնում է առավել կարիքավոր փախստական ընտանիքների բնակարանային ապահովության ծրագիրը, որի շրջանակներում անցյալ տարիներին 1065 ընտանիքներ ստացել են բնակարանների ձեռքբերման վկայագրեր, եւ նրանցից 721-ն այդ վկայագրերով կարողացել են լուծել իրենց բնակարանային խնդիրները: Անցյալի տարի Երեւանում Ֆուչիկի փողոցում կառուցված բազմաբնակարան շենքում մշտական օթեւան ստացան եւս 61 ընտանիքներ: Անդրադառնալով Հայաստանում փախստականների զբաղվածության հարցերին՝ Գագիկ Եգանյանը նշեց, որ փախստականները ՀՀ քաղաքացիների իրավունքներին համահավասար իրավունքներ ունեն, սակայն ընդհանուր մոտեցում ունենալով հանդերձ էլ տեղացիների համեմատությամբ փախստականների գործազրկությունն ավելի բարձր է:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Պատերազմը՝ արկածախնդրություն, սահմանային լարումները՝ հնարավոր

Հայաստանյան ռազմական փորձագետներ Դավիթ Ջամալյանն ու Արծրուն Հովհաննիսյանը երեկ կայացած ասուլիսում, չնայած անգամ ամանորյա ուղերձում Իլհամ Ալիեւի ռազմական հռետորաբանությանը, հայ-ադրբեջանական պատերազմը արկածախնդրություն որակեցին երկու պատճառով: Նախ՝ հավանական պատերազմից առաջ Ադրբեջանը լավ հասկանում է, որ ուժերի հարաբերակցության խնդիր կա, ապա նաեւ՝ պատերազմը վստահաբար ռիսկային կլինի Ալիեւ ընտանիքի համար՝ իշխանությունը պահպանելու առումով: Ուժերի հարաբերակցության մասով՝ Ջամալյանը հստակորեն կարեւորեց, որ անցած տարում Հայաստանը բարձրացնեց, որ տիրապետում է հակաօդային պաշտպանության միջոցների. «Հաշվի առնելով, որ ժամանակակից պատերազմում օդուժը, մեղմ ասած, էական դեր է խաղում, կարծում եմ, Երեւանի նման զգուշացումը իրականության կբերի Ադրբեջանին: Քանի որ նվազում է հավանական պատերազմում Ադրբեջանի հաղթանակի հնարավորությունը, հետեւաբար՝ այդ երկրի ձեռնարկած լայնամասշտաբ ռազմական գործողությունները առհասարակ», ասաց Ջամալյանը, որի հետ համաձայնեց Արծրուն Հովհաննիսյանը՝ ավելացնելով. «Ես չեմ կարծում, որ նորմալ երկրի նորմալ ղեկավարը նման արկածախնդիր պատերազմ կսկսի»: Մյուս կողմից, սակայն, ըստ երկու փորձագետների, որոնցից ինչ-ինչ մեսիջներ ուղարկի միջազգային հանրությանը, ինչպես նաեւ սեփական ժողովրդին իր իսկ խոսքերի իրավացիության մեջ ապացուցի, Իլհամ Ալիեւը հավանական է, որ կգնա սահմանային որոշ լարվածությունների, դիվերսիոն գործողությունների կազմակերպման. «Կարող են լինել նման փորձեր, բայց ոչ ավելին, նորից եմ կրկնում՝ Ալիեւը պատերազմ սկսելու արկածախնդրություն չի դրսեւորի», ասաց Ջամալյանը:

Ինչ վերաբերում է հարեւան երկրի սպառազինության պարբերաբար թարմացմանը, ապա Արծրուն Հովհաննիսյանը, հայտնելով իր մասնագիտական կարծիքը, նկատեց, որ այդ սպառազինությունները պիտանելիության ժամկետ ունեն. «25 տարի հետո, եթե այդ ժամանակահատվածում Բաքուն պատերազմ չսկսի, ապա ստիպված կլինի ամբողջովին նորացնել իր զինանոցը, քանի որ «ընդարձակ աշխարհագրությամբ» գնված սպառազինության պիտանելիության ժամկետն անցած կլինի», վստահեցրեց ռազմական փորձագետը:

Թերեւս մնում է միայն ավելացնել, որ պատերազմի վերսկումը ցանկալի չէ նաեւ իր իսկ՝ ադրբեջանցի ժողովրդի համար:

Հ. Ա.

Տարաբնույթ

Նորահայտ երկնաքարային խառնարան Արարատ լեռան վրա

Երկու գիտնականների հայտնագործությունը

Աստղաֆիզիկոսներ Վահագն Գուրզադյանի եւ Սվեր Աարսեթի կողմից Արարատ լեռան վրա երկնաքարային հնարավոր բնույթի խառնարանի հայտնագործման վերաբերյալ նրանց հոդվածը ներկայումս տպագրության մեջ է բրիտանական OBSERVATORY գիտական ամսագրում: Սակայն մինչ այդ, հայտնվելով Քորնելի համալսարանի կայքում, այդ լուրը անցել է աշխարհի տարբեր լրատվամիջոցներ: Ստորեւ թարգմանաբար բերում ենք թուրքական լրատվամիջոցներից (IGDIR, Softpedia) տեղեկատվությունը՝ հիմնված Մասաչուսեթսի Տեխնոլոգիական ինստիտուտի տեղեկագրի հաղորդագրության վրա:

Լուսանկարը՝ Վահագն Գուրզադյանի

Մասնագետների թիմը կարծում է, որ նրանք հայտնաբերել են հավանաբար երկնաքարային բնույթի խառնարան բիբլիական Արարատ լեռան վրա՝ պատմական Հայաստանում: Խառնարանը կարող է առաջացած լինել միլիոնավոր տարիներ առաջ:

Հայտնագործությունը կատարել են երկու ֆիզիկոս, որոնք ինչ-որ կերպ ստացել են թույլտվություն՝ մտնելու լեռան այն տարածքը, որը փակ է հասարակության համար. լեռան հյուսիսային եւ արեւմտյան լանջերը փակված են իշխանությունների կողմից:

Արարատ լեռը գտնվում է Արեւելյան Թուրքիայի գավալ հայկական տարածքում (ուշադրություն դարձնել թուրքական լրատվամիջոցի այս բնորոշմանը - խմբ.), Հայաստանի եւ Իրանի հետ փաստացի սահմանի մոտակայքում: Տարածաշրջանում քաղաքական իրավիճակը անկայուն է, այդ պատճառով էլ թուրքական իշխանությունները լեռան հյուսիսային եւ արեւմտյան մասերի մատչելիության սահմանափակումներ են դրել: Բայց բնաշխարհի գեղեցկությունը շատերին է հրապուրում, մանավանդ որ, ըստ Աստվածաշնչի, ջրհեղեղից հետո Նոյյան տապանը այնտեղ է հանգրվանել: Թեեւ մինչեւ օրս ոչ մի հետք չի հայտնաբերվել:

Չնայած այդ սահմանափակումներին, գիտնականներ Վահագն Գուրզադյանին՝ Երեւանի ֆիզիկայի ինստիտուտից եւ Սվեր Աարսեթին՝ Մեծ Բրիտանիայի Քեմբրիջի համալսարանից, հաջողվել է հետազոտել տարածքը: Նրանք հայտնաբերել են մի խառնարան, որը կարիք ունի հետագա հետազոտման, որ իրոք երկնաքարային բնույթի է: Խառնարանը գտնվում է 2.100 մետր բարձրության վրա, 39⁰ 47՛30՞ հյուսիսային եւ 44⁰ 14՛40՞ արեւելք կոորդինատներով: Ըստ նկարագրության, խառնարանը ունի մոտ 70 մետր տրամագիծ, մոտ 15 մետր խորություն: Գիտնականները գտնում են, որ խառնարանը կարող է ունենալ տիեզերական երկնաքարային հարվածի բնույթ, սակայն դրա հրաբխային բնույթը նույնպես չի բացառվում: Նրանք բացառում են խառնարանի սառցադաշտային բնույթը: Գիտնականները նշում են հետագա հետազոտությունների անհրաժեշտությունը՝ խառնարանի բնույթը եւ տարիքը պարզելու համար:

Նման հետազոտությունները, կարծում են մասնագետները, չափազանց կարեւոր են, քանի որ հնարավորություն են տալիս պարզելու երկնաքարերի հարվածների ազդեցությունը երկրագնդի անցյալի վրա:

Massachusetts Technology Review-ն նշում է, որ խառնարանը այդ գիտնականների միակ հայտնագործությունը չէ: Քանի որ տարածքը փակ է, փաստորեն հետազոտված չէ, Գուրզադյանին եւ Աարսեթին հաջողվել էր նկարահանել ավերակներ, որ ինչպես հետո պարզվել է, պատկանում են V-VI դդ. հայկական բազիլիկ եկեղեցու՝ մինչ այդ մասնագետներին անհայտ (այդ հետազոտության մասին հոդվածը Վ. Գուրզադյանը հրատարակել է համատեղ ակադ. Վարազդատ Հարությունյանի հետ. Պատմա-բանասիրական հանդես, 2, 2006 - խմբ.): **Հ. Ծ.**

Կադրային փոփոխությունների հիմքում արդյունավետության հրամայականն է

Անցած տարվա վերջին գրանցված իրողությունների ներքո այսօր էլ մնում է ամենամնարկվողը: Ընդ որում՝ իշխանությունները հերթական նշանակումներով թեման թեժ պահելու առիթներ են տալիս:

Կադրային քաղաքականության մեջ շեշտադրումների փոփոխության մասին առաջին անգամ հայտարարեց նախագահ Սերժ Սարգսյանը ՀՀԿ 20-ամյակի նիստում ունեցած ելույթում:

«Միշտ չէ, որ մենք պատասխանատու քաղաքական պաշտոնների ենք նշանակում հանրապետականներ... Ցանկացած դեպքում, եթե տեսնենք, որ տվյալ գործը կարող է ավելի լավ կատարել մեկ այլ անկուսակցական, մենք այդպես ենք վարվելու», Սերժ Սարգսյանի այս խոսքերը միանգամից ընկալում չգտան, բայց մի քանի օրվա տարբերությամբ արդեն պարզ էր, որ այդ մոտեցումը կյանքի է կոչվում անմիջապես. ամենահիշարժանն այս առումով հանրապետականներ Գեւորգ Դանիելյանի ու Գագիկ Բեգլարյանի պաշտոնանկությունից հետո նրանց զբաղեցրած պաշտոններում անկուսակցական Հրայր Թովմասյանի ու Կարեն Կարապետյանի նշանակումն էր:

Ինչո՞վ էր սա նշանակալից: Այն հանգամանքով, որ վկայում էր մոտեցման փոփոխության մասին: Եթե նախկինում պորտֆելները բաժանվում էին ըստ կուսակցությունների, եւ կուսակցություններն իրենք էին որոշում կադրային հարցերը, ապա այժմ, կարծես թե, պետության կամ բարձրագույն իշխանության կողմից սահմանվում են ընդհանուր պահանջներ: Ավելի կարճ՝ մասնագիտական միտանելիություն:

Նախկինում բազմաթիվ են եղել դեպքերը, երբ «պորֆնեգոդնոսի» պատճառով առանձին պաշտոններում պարբերական փոփոխություններ են տեղի ունեցել: Ամենատիպիկ օրինակը մի քանի տարի առաջ մշակույթի նախարարության շուրջը ստեղծված իրավիճակն էր, երբ ՕԵԿ-ին բաժին հասած պորտֆելի խնդիրը կայունացավ միայն այն բանից հետո, երբ այդ պաշտոնն ապակուսակցականացվեց: Այդ ժամանակ դա մեկ առանձին ոլորտում իրականացված հաջող քայլ էր, մինչդեռ հետագայում պարզվեց, որ խնդիրը համակարգային բնույթ է կրում:

«Կուսակցականացված» նշանակումները մտածողության արդյունք են՝ Հայաստանի քաղաքական մշակույթի մաս, որն այսօր էլ գերիշխող է: Բայց այդ մշակույթը խոչընդոտում է պետական կառավարումն արդյունավետ դարձնելուն, հետեւաբար՝ խոչընդոտում է երկրի արդիականացմանն ու զարգացմանը: Ինչո՞ւ: Ախտորոշումը տալը դժվար է, բայց փորձենք որոշակիորեն բանաձեւել:

Կայացած երկրներում քաղաքական կուսակցություններն ունեն հստակ ծրագրեր՝ քաղաքական լուծումներով, եւ որ ամենակարեւորն է՝ կադրային բազա, որոնք մասնագիտական տեսանկյունից տիրապետում են այդ ծրագրերին եւ ունակ են ոչ միայն դրանք իրագործելու, այլեւ առաջ մղելու համար ինքնուրույն որոշումներ կայացնելու: Այս ամենին գումարած, որպես կանոն, մեկ քաղաքական թիմի մեջ համախմբվածները վառ անհատականություններ են, քաղաքական գործիչներ, եւ կարողանում են համակարգն «իրենց տակ» կառուցել:

Հայաստանը, ինչպես եւ անցումային որեւէ երկիր, զարգացման որոշակի փուլում նույնպես վարակվեց այդ «խրոնիկական հիվանդությամբ», երբ կուսակցությունները ձեւավորվում էին վառ անհատականությունների շուրջը եւ համալրվում էին անցումային իրադարձությունների ընթացքում աչքի ընկած գործիչներով (վառ հեղափոխականներ, պատերազմի մասնակիցներ, հաջողակ բիզնեսմեններ): Արդյունքում՝ կուսակցական կադրային բազան թվում է մեծ, բայց որպես կանոն համալրված չի լինում անհրաժեշտ բոլոր մասնագիտություններով ու հմտություններով: Որոշակի բացեր են մնում, ինչն էլ, իր հերթին, պատճառ է դառնում, որ անգամ բոլոր մանրամասներով քաղաքական լուծումներ պարունակող ծրագրերը մնան չիրականացված:

Ի՞նչ է սացվում: Որպեսզի իրականացնի իր քաղաքական ծրագիրը, կուսակցական ղեկավարությունն իշխանության գալու դեպքում այսպես թե այնպես պատասխանատու քաղաքական պաշտոններում նշանակում է հենց իր թիմակիցներին, որոնք տարբեր պատճառներով (ոլորտին չտիրապետելը, գաղափարներ չգեներացնելը, սահմանափակ ինքնուրույնությունը եւ այլն) չեն կարողանում իրենց վստահված ոլորտներում ենթահամակարգ կառուցել: Հետեւանքները կարելի է մատների վրա հաշվել.

- Նման գործիչները չեն կարողանում վերահսկել իրավիճակը, եւ ենթակա ստորաբաժանումները սկսում են ինքնուրույն գործել,

- փաստացի հրաժարվում են ոլորտը կառավարելուց եւ տարբեր սխեմաներով փորձում են օգուտներ քաղել զբաղեցրած դիրքից,

- վերածվում են բյուրոկրատական ապարատի՝ սահմանափակվելով միայն վերեւից եկած որոշումների վարչական իրացմամբ:

Կրկնում ենք՝ սա բնորոշ է բոլոր անցումային երկրներին: Եվ եթե անցման առաջին փուլում ինստիտուցիոնալ կայացման շրջանում, այն ընդհանուր զարգացման վրա էական ազդեցություն կարող է եւ չունենալ, ապա բարեփոխումների երկրորդ՝ ենթակառուցվածքների ստեղծման, կառավարումն արդյունավետ դարձնելու փուլում, նման իրավիճակը միանշանակ խոչընդոտ է առաջընթացին, որովհետեւ ոլորտներից յուրաքանչյուրը պետք է կառավարվի ինքնուրույն՝ ձեւավորելով սեփական համակարգը:

Խնդիրը հասկանալու համար առաջարկում ենք ինքնուրույն համեմատել մեկ առանձին (ձեզ ծանոթ) ոլորտում տարբեր գործիչների պաշտոնավարման ժամանակ տիրող իրավիճակը: Նման համեմատությունների դեպքում դուք կբացահայտեք, որ նույն նախարարությունը ժամանակային մի հատվածում ներկայացնում է կուռ ամբողջական համակարգ՝ միասնական կառավարմամբ, իսկ մեկ այլ գործչի պաշտոնավարման ընթացքում նույն նախարարության ենթակայության ներքո գործող ստորաբաժանումներն ավելի շատ ինքնուրույն մարմինների գործելակերպ են որդեգրել: Կարծում ենք՝ հասկանալի է, թե խոսքն ինչի մասին է, եւ հասկանալի է նաեւ, որ այդկերպ շարունակելու դեպքում երկրի առաջընթացի մասին խոսք լինել չի կարող:

Իսկ ո՞րն է հիվանդության բուժման եղանակը:

Առաջին քայլով քաղաքական ղեկավարությունը, կուսակցությունների ղեկավարները պետք է ընդունեն, որ նման խնդիր գոյություն ունի: Ցանկալի է՝ հրապարակավ: Երկրորդ՝ քայլեր արվեն խնդիրը լուծելու ուղղությամբ:

Որ նախագահն իր ելույթում նշված շեշտադրումներն արել է, ենթադրել է տալիս, որ խնդիրը՝ որպես համակարգային, ոչ միայն ընդունվում է, այլեւ լուծման մտադրություն կա: Լուծումները նույնպես շատ չեն. կուսակցություններում սերնդափոխություն՝ երկրորդ սերնդի բարեփոխումների պահանջներին համապատասխանող կադրերի ներգրավմամբ, եւ քաղաքական պաշտոնների ժամանակավոր ապակուսակցականացում՝ այդ պաշտոններին ենթակա ոլորտներում պետական կառավարումն արդյունավետ դարձնելու մտադրությամբ:

Վերջին կադրային փոփոխությունները վկայում են, որ երկրորդ ուղղությամբ եւս իշխանությունները ձեռքերը ծալած չեն նստում: Ներկայացված բանաձեւի շրջանակներում կարելի է վերլուծել վերջերս իրականացված կադրային նշանակումներից յուրաքանչյուրը, բայց արդեն իսկ պաշտոնանկ արված գործիչների հասցեին մեղադրանքներ չինչեցնելու եւ նորանշանակներին գովասանքի խոսքեր չշռայլելու մտադրությունից ելնելով՝ առաջարկում ենք, որ այդ անալիզն ընթերցողն ինքնուրույն անի:

Ս. Ս.

Սաադ Հարիրին Անկարայում

Նրա այցի գլխավոր առաջադրանքը Թուրքիայի միջնորդությամբ կառավարական ճգնաժամի հաղթահարումն է Լիբանանում

Երեկ Անկարայում՝ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի գլխավորությամբ Թուրքիայի ղեկավարության հետ հանդիպումներ է ունեցել Լիբանանի վարչապետ Սաադ Հարիրին: Հանդիպումներում, որպես առաջնահերթ խնդիր, քննարկվել է կառավարական ճգնաժամի հաղթահարումը: Կհաջողվի՞ Թուրքիայի միջնորդությամբ հաղթահարել այս ճգնաժամը Լիբանանում, ցույց կտա ժամանակը: Բայց որ Լիբանանը 2005-ին Սաադի հոր՝ նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանությունից հետո ապակայունացել է, եւ անկայունությունը երկրի համար մշտական գործոն է դարձել, ակնհայտ է:

Այլ կերպ, Լիբանանի խնդիրը ոչ այնքան Սաադ Հարիրիի գլխավորած կառավարության ճգնաժամն է, որքան ճգնաժամային այն իրավիճակը, որից երկիրը արտաքին միջամտությունների պատճառով ոչ մի կերպ դուրս չի գալիս: Ըստ երեւույթին ոչ էլ դուրս կգա, քանի որ ճգնաժամի հաղթահարումը երկրի ներքին գործերին միջամտելու հնարավորությունից կզրկի ինչպես միջազգային ուժերին, այդպես էլ այս ուժերի միջնորդությամբ Լիբանանում գաղափարական ներկայություն ապահովող Իսրայելին:

Համենայն դեպս, հունվարի 12-ին, երբ Վաշինգտոնում Սաադ Հարիրին բանակցում էր նախագահ Բարաք Օբամայի հետ, նրա կառավարության 11 նախարարներ, որոնք ներկայացնում էին «Հզբոլլահին», «Ամալին» եւ «Ազատ հայրենասիրական շարժումը», հրաժարական էին տվել: Հրաժարականի պատճառաբանությունը Ռաֆիկ Հարիրիի սպանությունը հետաքննող միջազգային հանձնաժողովի հատուկ դատարանի սպանության մեջ «Հզբոլլահին» մեղադրելու հետեւությունն էր:

Թեեւ «Հզբոլլահը», համարելով սպանությունը ամերիկա-իսրայելական դավադրություն, հերքել էր մեղադրանքը, սակայն ո՛չ ԱՄՆ-ի, ո՛չ Իսրայելի, ո՛չ էլ Սաուդյան Արաբիայի միջնորդությամբ Վաշինգտոնի վերահսկողության տակ գտնվող վարչապետ Սաադ Հարիրիի կառավարությունը փլուզվել է հենց «Հզբոլլահին» չեզոքացնելու այդ նկրտման պատճառով, որը միաժամանակ Լիբանանի անկայունության գլխավոր պատճառն է նաեւ: Հետեւաբար, քանի դեռ Միացյալ Նահանգները, միջազգային մյուս ուժերն ու Իսրայելը չեն հրաժարվել «Հզբոլլահին» չեզոքացնելու ծրագրից, որն, ի տարբերություն ԱՄՆ-ի եւ Սաուդյան Արաբիայի դրածո համարվող Սաադ Հարիրիի կառավարության, մեծ ժողովրդականություն է վայելում երկրում եւ ամուր դիրքեր ունի, Լիբանանը կայունանալ չի կարող:

Սակայն խնդիրն ինքնին «Հզբոլլահին» չեզոքացնելու ամերիկա-իսրայելական ծրագիրն էլ չէ, այլ Լիբանանում Իրանի Իսլամական Հանրապետության դեմ «Հզբոլլահի» պատրվակով ծավալվող ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների չհայտարարած պատերազմը: 2006-ին Լիբանանի դեմ սանձազերծած պատերազմում Իսրայելը խայտառակ պարտություն կրեց «Հզբոլլահից»: Չի բացառվում, որ Լիբանանում պատերազմ սանձազերծելու դեպքում Իրանն էլ «Հզբոլլահի» օրինակով պարտության մատնի ԱՄՆ-ին եւ նրա դաշնակիցներին:

Դրանով իսպառ կձախողվի ոչ միայն Լիբանանում «Հզբոլլահին» չեզոքացնելու ամերիկա-իսրայելական ծրագիրը, այլեւ զուգահեռաբար ի չիք կդառնա նաեւ տարածաշրջանում Սաուդյան Արաբիայի գլխավորությամբ հակաշիական կոալիցիա ձեւավորելու եւ դա Իրանի Իսլամական Հանրապետությանը հակադրելու Վաշինգտոնի մյուս ծրագիրը:

Այս զարգացումը, ինչ խոսք, կհանգեցնի տարածաշրջանում Իրանի ազդեցության աննախադեպ ամրապնդմանն ու խթան կհանդիսանա հակաամերիկյան տրամադրությունների հետագա ծավալման համար: Այսպիսով, Մ. Նահանգները դիրքեր կկորցնեն Մերձավոր եւ Միջին Արեւելքում, ամերիկյան ծրագրերի ձախողման պայմաններում կսպառվեն Վաշինգտոնի միջնարեւելյան քաղաքականության դիրքերը, վերջինն այսպիսով կզրկվի ոչ միայն որդեգրած քաղաքականությունը վերանայելու, նույնիսկ արդյունավետ նոր քաղաքականություն մշակելու հնարավորությունից:

Այլ կերպ, եթե «Հզբոլլահը» վտանգում է Լիբանանում ԱՄՆ-ի եւ Իսրայելի ծրագրերը, ապա Իրանի Իսլամական Հանրապետությունն էլ տարածաշրջանում լուրջ վտանգ է ներկայացնում ամերիկյան քաղաքականության հետագա ընթացքի համար: Սակայն «Հզբոլլահը» Լիբանանում, իսկ Իրանը՝ Մերձավոր եւ Միջին Արեւելքում պաշտպանողական մեծ ներուժ ունեն, հակառակ դրան, Մ. Նահանգները՝ բազում անհետաձգելի խնդիրներ: Թերեւս տարածաշրջանում Իրանի դիրքերի աննախադեպ ամրապնդման հանգամանքը կարող է կառավարական ճգնաժամի հաղթահարման հարցում Թուրքիայի առջեւ միջնորդության հեռանկարներ բացել Լիբանանում, սակայն այդ միջնորդությունը նախ պետք է փոխհամաձայնեցված լինի Վաշինգտոնի հետ եւ դրան նախապես հավանություն տա նաեւ Իսրայելը: Մինչդեռ Թուրքիան ե՛ւ ԱՄՆ-ի, ե՛ւ Իսրայելի հետ ներկայիս ունի լուրջ տարաձայնություններ:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲԵՏՆ

Կողոպտել են Արգենտինայի նախագահի «տրանսպորտային» փողերը

Մոտոցիկլավոր չարագործները կողոպտել են Արգենտինայի նախագահ Քրիստինա Կիրշների աղարտի այն աշխատակցին, որը փող էր տեղափոխում նախագահի մերձավորարեւելյան շրջագայության տրանսպորտային ծախսերի համար: Այդ մասին հաղորդում են արգենտինական լրատվամիջոցները:

Միջադեպը տեղի է ունեցել մայրաքաղաք Բուենոս Այրեսի հյուսիսարեւելքում, օրը ցերեկով, երբ նախագահի արտասահմանյան ուղեւորությունները համակարգող ստորաբաժանման 44-ամյա աշխատակիցը վերադառնում էր տուն: Perfil.com կայքի տվյալներով, հարձակվողներից մեկը ատրճանակը դեմ է արել տուժածի գլխին եւ խլել փողերով լի պայուսակը, իսկ մյուսը հանցակցին սպասել է մոտոցիկլետի վրա:

Ձինված կողոպուտի ժամանակ հափշտակվել են 68 հազար դոլար եւ 17 հազար եվրո (ավելի քան 360 հազար պեսո): Այդ փողերը նախատեսված էին նախագահի օդանավի անձնակազմի վարձատրության եւ տրանսպորտային այլ ծախսերի համար: Կիրշների աղարտի աշխատակիցը դրամական միջոցները կանխիկացրել էր գանձապետարանում եւ տուն էր հասել ծառայողական ավտոմեքենայով՝ թեկնածուի ուղեկցությամբ, նշում է La Nation թերթը:

Կիրշների մերձավորարեւելյան շրջագայությունը սկսվել է հունվարի 13-ին: Ֆրանսպրեսի տվյալներով, ծրագրում ընդգրկված երկրներն են Քուվեյթը, Քաթարը եւ Թուրքիան:

Սկսվել է միջադեպի քննությունը: Քննիչները պետք է տան այն հարցերի պատասխանները, թե ինչո՞ւ էր տուն գնում ծառայողական ավտոմեքենայով եւ իրավունք ունե՞ր արդյոք փողերն սանձալուց հետո ոստիկանությանը զեկուցել:

«Օդային» նոր ռեկորդներ Սաուդյան Արաբիայում

Սաուդյան Արաբիայի խոշորագույն քաղաքներից մեկում՝ տնտեսական կենտրոն համարվող Ջիդդայում երեք տարի հետո կգործարկվի մերձավորարեւելյան տարածաշրջանի ամենախոշոր օդանավակայաններից մեկը, որի կառուցման աշխատանքները մեկնարկել են այս շաբաթ:

Նոր օդանավակայանի շնորհիվ կավելանան դեպի Սաուդյան Արաբիա օդային ճանապարհով ուղեւորափոխադրման ծավալները: Ավելին, ակնկալվում է, որ Ջիդդա ուղեւորների ծավալը կկազմի տարական 30 մլն ուղեւոր: Հատկանշական է, որ օդանավակայանի կառուցման տենդերը շահել է թագավորության շինարարական խոշորագույն ընկերություններից մեկը, որը պատկանում է Բեն Լադենին:

Այս օդանավակայանը Սաուդյան Արաբիայի համար ռազմավարական նշանակություն ունի, քանի որ աշխարհի տարբեր ծայրերից մուսուլմանները Մեքքա ուխտագնացության են գալիս հիմնականում Ջիդդայով: Ըստ պաշտոնական տվյալների՝ կառուցվելիք օդանավակայանի սպասասրահների ընդհանուր մակերեսը կկազմի 670 կմ, բեռների եւ ճամպրուկների սացման գիծը՝ 60 կմ: Բացի այդ, օդանավակայանը կունենա 94 ինքնաթիռի համար նախատեսված կայանատեղի, ինչպես նաեւ հյուրանոց: Ավելին, Ջիդդայի օդանավակայանի դիտման աշտարակը՝ 133 մետր բարձրությամբ, կլինի աշխարհում ամենաբարձրը:

Է. Մ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՀԵՐ

Քլինթոնը, Իրանը եւ Ծոցի արաբական երկրները. ո՞րտեղ են համընկնում նրանց շահերը

Հիլարի Քլինթոնը այս շաբաթ այցելել է Ծոցի արաբական երկրներից Արաբական Միացյալ Էմիրություններ, Քաթար եւ Օման: Ըստ փորձագետների՝ այցի հիմնական նպատակը եղել է արաբական երկրների աջակցության ձեռքբերումը՝ Իրանի նկատմամբ պատժամիջոցների խստացման վերաբերյալ:

Վերջին երկու ամիսների ընթացքում սա Քլինթոնի նմանատիպ երկրորդ այցն է Ծոցի արաբական երկրներ: Աբու Դաբիում լրագրողների հետ հանդիպման ընթացքում Քլինթոնը նշել է, որ պատժամիջոցները թեեւ որոշակիորեն կասեցրել են Իրանի միջուկային ծրագրի իրագործումը, սակայն դա չի ազդարարում խնդրի վերջնական լուծումը: Ավելին, ըստ ԱՄՆ-ի պետքարտուղարի՝ Իրանի միջուկային ծրագրի դանդաղումը պայմանավորված է հենց կիրառվող պատժամիջոցներով, այլ ոչ թե տեխնիկական թերություններով (ավելի վաղ Իսրայելի հատուկ ծառայության՝ «Մոսադի» ղեկավար Մեիր Դագանը նշել էր, որ մի շարք տեխնիկական պատճառներով Իրանը միջուկային զենք կունենա միայն 2015-ին):

Ըստ փորձագետների՝ Իրանին հարեւան արաբական երկրները պատժամիջոցների հետ կապված իրենց պարտականությունները կատարել են առավելագույն չափով: Միաժամանակ՝ Իրանի հետ ունեցած նրանց հարաբերությունների մակարդակը թույլ չի տալիս, որ նրանք լիովին խզեն Իրանի հետ իրենց կապերը: Իրանի եւ հարեւան արաբական երկրների միջեւ առկա տնտեսական, քաղաքական հարաբերությունները, անվտանգության ոլորտում համագործակցությունը, առեւտրաշրջանառության մակարդակը առկա կապերի պահպանման երաշխավորն են:

2010թ. Ծոցի արաբական երկրներից Իրան արտահանման արտահանումը կազմել է $10 միլիարդ: Հետեւապես, ըստ փորձագետների՝ եթե ԱՄՆ-ը ցանկանում է սանձել արաբական երկրների աջակցությունը, ապա նրանց պետք է համարժեք «այլընտրանք» առաջարկի: Ընդ որում՝ արաբական երկրների համար Իրանի հետ տնտեսական համագործակցությունն ասիճանաբար ավելի է կարեւորվում, քանի որ Թուրքիան, վերջին շրջանում ամրապնդելով Իրանի հետ իր հարաբերությունները, դարձել է տնտեսական ոլորտում արաբական երկրների՝ հատկապես ԱՄԷ-ի իրական մրցակիցը:

Ուստի, մի շարք փորձագետների կարծիքով, Քլինթոնի այցը լուրջ արդյունքներ չի արձանագրի ԱՄՆ-ի համար, քանի որ արաբական երկրները իրենց ազգային եւ տարածաշրջանային շահերը չեն սորադասի ԱՄՆ-ի շահերին:

Լ. Մ.

Աբբաս. «Կբանակցենք, եթե ԱՄՆ-ը ճանաչի 1967-ի սահմանները»

Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասը քաթարյան «Ալ Ջազիրա» հեռուստալիին տված հարցազրույցում հայտարարել է, որ, իր կարծիքով, Վաշինգտոնը բավարար ջանքեր չի գործադրում պաղեստինյան անկախ պետության ստեղծման համար:

Աբբասը ընդգծել է, որ պաղեստինցիները իսրայելա-պաղեստինյան հաշտության բանակցությունները կվերսկսեն լոկ այն դեպքում, եթե ԱՄՆ-ը ճանաչի 1967-ի սահմանները եւ Իսրայելին պարտավորեցնի կասեցնել Ջորջ Բուշի վարչակազմի հետ ստորագրված անվտանգության պայմանագրերը:

Պաշտոնական այցով Դոհայում (Քաթար) գտնվող ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը այս կապակցությամբ հաստատել է Պաղեստինի անկախության առումով Միացյալ Նահանգների ստանձնած պարտավորությունները: Նա ընդգծել է, որ իր գերատեսչությունը տվյալ խնդրին շատ ժամանակ եւ ուշադրություն է հատկացնում, փորձելով վերականգնել երկու հակամարտ կողմերի փոխադարձ վստահությունը եւ նրանց դրդել փոխզիջումների:

Քաղցկեղային բջիջները բարորակ դարձնելու եղանակ

Մեծ Բրիտանիայի Նոթինգհեմ քաղաքի համալսարանի հետազոտողները դոկտորներ Սինցիա Ալլեգրուչիի եւ Էնդրյու Ջոնսոնի գլխավորությամբ հայտնաբերել են մի եղանակ, որը թույլ է տալիս «քնեցնել» քաղցկեղային ուռուցքները: Նոր տեխնոլոգիայի շնորհիվ քաղցկեղային բջիջները դառնում են բարորակ, եւ կանգնեցվում է դրանց տարածումն օրգանիզմում: Այդ մասին հաղորդում է The Telegraph թերթը:

Մեթոդը հիմնվում է օրգանիզմում քաղցկեղը ճնշող բնական գեների վերաշխուժացման վրա, որոնք «անջատվում» են հիվանդության ժամանակ: Թեեւ ուռուցքը չի փոքրանում, բայց դրա տարածումը արգելակվում է: Լաբորատորիայի կենդանիների վրա բուժման տվյալ եղանակը փորձարկվել է 100 տոկոս հաջողությամբ: Ներկայումս գիտնականները փորձում են դեղագործական ընկերությունների հետ համաձայնության գալ մարդկանց համար ռեալ դեղամիջոցի մշակման շուրջը:

Բջջի բաժանումը նախապես վերահսկում են հատուկ գեներ, որոնք սպանում կամ շտկում են օտարածին եւ վնասված բջիջները: Եթե տվյալ մեխանիզմը խափանվում է, ի հայտ է գալիս քաղցկեղ, մանավանդ՝ եթե «սուրբեսոր» գեները ինչ-ինչ պատճառներով անջատված են:

Գիտնականների կիրառած նոր տեխնիկան ենթադրում է սալամանդրի որոտենների (սպիտակուցների) օգտագործում: Ավելի վաղ փորձարկումներից պարզվել էր, որ դրանք կարողանում են միացնել եւ անջատել մարդու գեները: Կրծքի քաղցկեղի բջիջների հետ խառնվելիս այդ որոտենները վերաշխուժացնում են քաղցկեղը ճնշող «սուրբեսոր» գեները: Մկներին ներարկելիս դրանք կանգնեցնում են քաղցկեղի տարածումը:

Ներկայումս գիտնականները փորձում են հասկանալ, թե կոնկրետ որ որոտենները են օգնում հակաքաղցկեղային պայքարին, որպեսզի դրանցից դեղորայք պատրաստեն:

ԱԶԳ

Մշակույթ

Մանրանկար զուգորդություններ

(Անատոլի Հովհաննիսյան, «Հայելի», Ե. 2010, 128 էջ)

Բանաստեղծի ինքնության արտահայտությունը լեզուն է՝ որպես լեզվի ի՛ր գեղարվեստական համակարգ, որպես հեղինակային լեզվամտածողություն: Բանաստեղծի ինքնության արտահայտությունը նաեւ պատկերային համակարգն է՝ որպես պատկերամտածողության ի՛ր գեղարվեստական համակարգ: Այս գրքի հեղինակի պատկերամտածողության հիմքը զուգորդությունն է: Զուգորդությունը որպես իմաստային հանգույց յուրաքանչյուր ստեղծագործության մեջ վերացարկման իր աստիճանը եւ գեղարվեստական համակարգի փոխակերպվելու իր այբբենն ունի: Զուգորդության հիմքում համեմատությունն է, համեմատության խտացումից առաջացած փոխաբերությունը: Այս ճանապարհով ասելիքը դրսեւորման ձեւ է ստանում եւ մարմնավորվում որպես գեղարվեստական խոսքի մի նոր գոյաձեւ: Առաջանում են զգայահուզական գոյացումներ, որպես մինչ այդ չդիտարկված պատկեր (գեղադիտակ) պատկերանակնկալ: Այս անակնկալի առանձնացումն անհրաժեշտ է, որովհետեւ այն ինչ ստեղծվում է, ստեղծվում է հանկարծակի: Այդպես ճանապարհի կեռմանի վրա կամ անդնդախոր ձորի եզրին հանկարծ անակնկալ տեսնում ես հայոց եկեղեցիները: Ամբողջ գիրքն այսպիսի զուգորդությունների մանրանկարչություն է, հիմնականում մի գլխավոր պատկերի արագ բացահայտումով, ավելի քիչ՝ ծավալումով:

Զուգորդությունների մեջ հնարավոր են համեմատության ցանկացած եզրերը, որոնք պատկերային լրացումներով ճշգրտում են իրենց ձիշտ եւ տեղին լինելու երբեմն շատ խորքային անհրաժեշտությունը՝ *«Լռությունը հախճապակե սկահակ է», «Թեւերս ցամաքած գետեր են»:*

Նման բանաստեղծություններն ամբողջությամբ կամ այդ ամբողջի առանձին մասերը որպես պատկեր ընկալելու եւ հեղինակի հետ մտավոր կապ հաստատելու նախապայմանը ընթերցման գրագիտությունն է, եւ դրա առկայությամբ մտքի սեւեռուն կենտրոնացումը: Անցումների, թռիչքների տարածությունը լայն է, բայց նո՛ւյն համակարգի մեջ: Գրագետ ընթերցումը պահանջում է մտքի սեւեռուն կենտրոնացում: Անցումների ակնհայտ կամ ենթադրվող կապերն ու ակնարկները պիտի զգալ, չնչին կորուստի դեպքում ասելիքը չի ընկալվի: Խոսքը խիտ է, մտավոր կամ զգայական ավելորդ դեգերումների տեղ չկա: Ընկալման պահի վրիպումի համար պատասխանատվություն է կրում նաեւ բանաստեղծը. դա այն դեպքում, երբ հաղորդակցության եզրերը շատ են հեռանում իրարից: Ի վերջո, զուգորդությունների շարժը ուղվածվում է նուրբ վերացարկումներով, ինչը որպես պատկեր ոչ թե նյութական-առարկայական է, այլ տեսլական, թեեւ շոշափելի չէ, բայց զգայելի է հոգով, մտքով, ուրսով, աչքով, ականջով, մեկ բառով՝ զուտ գեղարվեստի համար նախասահմանված տեսողությամբ: Զուգորդության թողած տպավորությունը պետք է արագ ընկալել, իսկ բացատրելու դեպքում դրա գեղեցկությունը կդառնա մտքի ճաղաղ քաշքուկ: Այլ կերպ, պահանջվում է հավասար զարգացածության հասուն վիճակ:

Բարեկիրթ մի նրբություն է բնորոշ այս գրքին՝ լեզուն, հեղինակի ներկայանալու ձեւը, բառապաշարը, պատկերը, թելադրական ասելիքին փոխարինած կռահումակնարկը: Այդ բարեկիրթ նրբությունը չափածո խոսքի վրայից թափ է տալիս նորահայտ գռեհկաբանների բարձրացրած բառափոշին: Նրբությունը ոչ միայն արտաքին է, այլեւ ներքին, եւ դա որպես թե՛ ասելիք, թե՛ ասելիքի ձեւ, թե՛ ասելիքի արվեստ: Հիշված կռահումակնարկը մտքի արագության, թռիչքային մտածողության արգասիք է: Խոսքի կառույցը ձեւավորող պատկերային հենակետերը հեռու են իրարից եւ գծին փոխարինած կետգիծը այլեւս արագության սահման չէ: Արագության սահմանը ներքին տեսողությունն է (կռահումը), որը բացահայտում է զուգորդությունների հեռավոր կարը: Այստեղից էլ ոչ թե բաց ասելիք՝ որպես պատմություն, ինքնաբացահայտում, խոսքի հեղեղ, այլ նուրբ ու հեռավոր ակնարկ՝ ապրումի, հոգեվիճակի, մտավիճակի մասին:

Բանաստեղծական այս համակարգի մեջ կարեւորվում է գեղարվեստական ժամանակի զգացողությունը: Շարժման մեջ ոչ թե իրական ժամանակն է կամ տեղական ժամանակը, այլ ապրված ակնթարթի ժամանակը, որը կիզակետված մեկ պահի մեջ՝ լուսանկարում է զգայական տեսիլքը, մտքի կայծակը:



Մտքի մեջ մարդու աչքն ու ականջը բնական դիրքից բացի նաեւ մեկ այլ տեղ են, որովհետեւ պիտի տեսնես այն, ինչը չի երեւում, լսես ձայներ, որոնք խլացած են հողի մեջ, ուրսի պայծառում, մտքի պատանքում կամ լողում են օդում: Սա տարածական նկարչության պես համակողմանի երեւացող տարածական բանաստեղծություն է, որի կազմաբանությունը ճշտողներից մեկն, ի դեպ, Ալիսիա Կիրակոսյանն է:

Մարդը տարածության մեջ երեւում է բոլոր կողմերից, ներսից ու դրսից, տակից ու վրայից: Այդպես տարածական են շարժումները, առարկաները, դրանց անդրադարձները եւ հատկապես ձայները: Այդ ձայները ճառագում ու խորանում են բառերի մեջ, որովհետեւ հոգու գաղտնիքն, ի վերջո, բառի մեջ է, որը դիմադրում է, հետ չի տրվում. *«Ես կախվում եմ ձայնից՝//Իմ միջից դուրս չեկող բառերի...», «Ամենդհաս ձայն է հնչում ականջումս»:*

Զուգորդությունների հանգույցն ունի վերջնական լուծում. որքան էլ անակնկալ, հանկարծակի, բայց միակ պատասխանով, թեեւ հնարավոր է մտովի այն այլ կերպ եւս շարունակել, ինչն արդեն բանաստեղծության թուլությունն է: Այլ կերպ չշարունակելու կամ հեղինակային տարբերակը մտովի չվերախմբագրելու համար անհրաժեշտ է ծայրահեղ ճշգրտություն, ինչը գեղարվեստի ներքին գիտությունն է:

Զուգորդական անցումները երբեմն շատ պարզ են *(«Ես ուզում եմ համբուրել ձեռքս,// Երբ մտածում եմ, //Որ դիպել է քեզ...», «Ես նայում եմ//մեռածի նման՝ բաց աչքերով//Քեզ...»)*, երբեմն բարդ, բազմաշերտ, ներքուստ ճյուղավորվող:

Եվ քանի որ «Հայելի», ուրեմն նաեւ անդրադարձ, ինչը նշանակում է թե մշտական լույսի ժամանակ է եւ ոչ թե խավարի: Ծնվում է իմաստուն մի մանրանկար. *«Մի տխրիր այդպես, //Թե չէ կկուրանամ,// Ինչպես մութ սենյակում //Անդրադարձից զրկված// Հայելին...»*:

Հայելու անդրադարձի մեջ երեւում են հարազատների դիմաստվերները: Հարազատների խմբանկարն ու դիմանկարը հայ պոեզիայում թեեւ նորություն չէ (Համո Սահյան, Վահագն Դավթյան), բայց վերջերս ընդգծված շեշտադրում է ստանում: Դա հատկապես ակնհայտ է անգլիագիր հայ բանաստեղծների շարքերում՝ Խաչիկ (Արչի) Մինասյան, Դավիթ Խերդյան, Հարոլդ Բոնդ, Լեւոն Սրապյան Հերալդ, Հելեն Փիլիպոսյան, Դայանա Տեր-Հովհաննիսյան, Փիթեր Բալաֆյան, Արամ Սարոյան, հայերեն ստեղծագործողներից՝ Սոնա Վան:

Ակնարկները, անդրադարձները միանում դառնում են որոշակի ասելիք, որպես մարդու ճակատագիր: Հեղինակն է եւ իրենով իմաստավորված սերը:

Ամբողջ գիրքը հպանցիկ դեմքերի խոհուն արտահայտություններով երիզված ճանապարհ է դեպի ինքն իրեն («Ինքս ինձ»): Այդ դեմքերի միջանցքով սուրացող բանաստեղծը իր դիմանկարի գույներն է ընտրում. Ինքնադիմանկար՝այս պատկերներով: *«Ամեն վայրկյան ես դուրս եմ գալիս//Ինքս ինձնից// Ու չեմ կարողանում //Վերադանալ՝//Բնից անզգուշորեն ընկած//Թռչնաձագի նման...»*:

Այս է մարդը, եւ այս է նրա կյանքի ժամանակը, այնքա՜ն ներհակ, որ կարող է թվալ, թե ինքն է խաչափայտը, որի վրա նորից պիտի Աստծուն խաչեն, որ ինքն է հենց իր ոսքերի տակից փախչող հողը, իր նետած բոլոր քարերի թիրախը, տողադարձի գծիկով երկայնված բառը: Իսկ ճշմարտություն ավետող բառերի տեղը դժբախտաբար ոչ թե կյանքի մեջ է, այլ բառարաններում:

Բեմականացումով պարզ, բայց իրական խաղով բարդ այս ողբերգության մեջ ոչ թե մարդու նահատակությունն է կամ ինքնասպանությունը, այլ կյանքը, ինչն ասես որպես ծաղր է նետված նրան, որովհետեւ թեեւ շնչահեղձ է լինում այս գարշահոտ ճահիճում, բայց իրեն ապրողի տեսք տված փորձում է փակել ականջները, որպեսզի չլսի «Ուրի պայթյունի ձայնը», որովհետեւ «Շեղբի պես սառը իրականությունը» ճամփաբաժնի նման կիսել է նրան: Սա երկայնված մարդու իրական ողբերգությունն է նույնքան իրական ժամանակի մեջ՝ որպես իրական մահ կյանք կոչված գերեզմանոցում: Ամեն ինչ ասված է: «Հայելի»-ն փակվում է այնպես, ինչպես բացվել էր. *«Իմ մեջ հանգչում է լռությունը՝//Մեռածի չարաբերած խոսքի...»*:

Կա եւ՛ գրողը, եւ՛ ասելիքը, եւ՛ արվեստը:

Ձեր խիտ դասավորված գրադարակներում տեղ բացեք Անատոլի Հովհաննիսյանի գրքի համար եւ շատ խոր մի խցկեք, որովհետեւ հաճախակի բանալու եւ կարդալու անհրաժեշտություն եք ունենալու:

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍ

50 տարի ծափահարությունների տակ

Բուենոս Այրեսի «Նասիոնալ» թատրոնի հարմարավետ դահլիճում, մոտ 1100 հանդիսատեսների հետ միասին, Արգենտինահայ մշակութային միության «Գայանե» պարախումբը տոնական համերգով նշեց իր կեսդարյա հոբելյանը:

Դժվար է ասել, թե դահլիճում արդյոք հուզմո՞ւնքն էր գերիշխում, թե՞ հիացմունքը: 50 տարի օտար ափերին, մայրենի հող ու ջրից այսքա՜ն հեռու, կարողանալ այսպես պահել հայ ոգին, կարողանալ փոխանցել այն հաջորդ սերունդներին ու կարողանալ իր շարքերը գրավել նույնիսկ օտարների՝ դյուրին չէ, սակայն «Գայանեն» կարողացել է ու այս տարի մի շարք միջոցառումներով նշում է իր 50-ամյակը, իր

կազմում ունենալով հիմնական եւ մանկական խմբերի 6-ից մինչեւ 32 տարեկան 90-ից ավելի անդամների, որոնց, հիշելով իրենց երիտասարդությունն ու չկարողանալով զսպել ներքին մղումը, հաճախ, ինչպես այդ պատահեց այս համերգի ժամանակ, միանում են «Գայանե»-ի վետերանները՝ առաջին սերնդի ներկայացուցիչները: Ու ոչինչ, որ նրանցից ոմանք արդեն պառիկներ ու տատիկներ են, ոմանք արդեն չունեն երիտասարդ տարիների ճկունությունը, ոչինչ, որ մազերը, եթե դեռ կան, արդեն ճերմակում են, նրանք նորից բեմի վրա էին, պարում էին իրենց զավակների հետ ուսուսի:

Խորհրդանշական է, որ այս հոբելյանական համերգում առաջին անգամ հիմնական խմբի շարքերում բեմ դուրս եկան նաեւ մանկական խմբի չորս անդամներ, որոնք մեծացել են, առնականացել ու հասակով արդեն հավասարվել մեծերին:

Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանին:

Արգենտինայում Հայաստանի Հանրապետության դեսպան Վլադիմիր Կարմիրշալյանը Արգենտինահայ մշակութային միության նախագահ Ադրիան Լոմլոմջյանին, փոխնախագահ Ադրինե Գասպարյանին եւ «Գայանե» պարախմբի գեղարվեստական խորհրդի անդամ Դանիելա Ռեյնոնեին հանձնեց ՀՀ Սփյուռքի նախարարության հատուկ շքանշան ու պատվոգիրը:

«Գայանեի» 50-ամյակի առթիվ ողջույնի հեռագրեր էին հղել տեղվույս հայկական համայնքի տարբեր հաստատությունների ու կազմակերպությունների ղեկավարներ, իսկ Հայկական բարեգործական ընդհանուր միության Բուենոս Այրեսի մասնաճյուղի քարտուղար Անտոնիո Սարաֆյանը ՀԲԸՄ անունից հանձնեց հուշատախտակ:

Համերգի ընթացքում ելույթ ունեցան նաեւ երգչուհի Միրտա Սաջյանը,

Սկսվում է հերթական սերնդափոխությունը...

Հանդիսատեսները երկար ծափահարեցին նաեւ «Գայանեի» առաջին գեղարվեստական ղեկավար եւ պարուսույց Ռոզա Չաֆեջյանին, նրան փոխարինած Միրտա Վարդանյանին ու ներկա պարուսույց Ալիսիա Անդրեասյանին, որոնց, ի նշան երախտագիտության, շքեղ ծաղկեփնջեր հանձնվեցին Հայ մշակութային միության կողմից:

50 երկար ու ձիգ տարիներ: Երեք սերունդ ու նաեւ երեք ղեկավար ու պարուսույց, որոնք իրենց եռանդն ու ժամանակը չեն խնայել, եղել են «Գայանե»-ի կազմում, դուրս են եկել հենց «Գայանե»-ի ծոցից, աճել նրա հետ, մեկնել Հայաստան ու կատարելագործվել Երեւանի պարարվեստի ուսումնարանում: Վերադարձել են հայրենիքի բույրերով ու գույներով հարուստացած ու այդ ամենը փոխանցել խմբին: Ուրեմն, պատահական չէ «Գայանե»-ի հաջողությունը, պատահական չէ հանդիսատեսի սերն ու հավատարմությունը, հանդիսատես, որ միշտ լցնում է դահլիճը, որքան էլ որ այն մեծ լինի: Ի դեպ նշենք, որ Ռոզա Չաֆեջյանն առաջինն էր Հարավային Ամերիկայից, որ 1959 թվականին մեկնել է Հայաստան ուսանելու ու կատարելագործվելու:

Ուրախությամբ պետք է հայտնենք նաեւ, որ ի ճանաչումն 50 տարիների ընթացքում իրականացրած ազգանվեր գործունեության եւ Սփյուռքում հայ մշակույթի պահպանման ու տարածման, «Գայանե» պարախումբն արժանացել է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի պատվոգրին եւ պարուսույց Ալիսիա Անդրեասյանը՝

Ասպարեզ է դուրս գալիս «Միկան»

Մեկնարկում է «Համագործակցության գավաթի» 19-րդ խաղարկությունը

Այսօր Սանկտ Պետերբուրգում կմեկնարկի ֆուտբոլի «Համագործակցության գավաթի» 19-րդ խաղարկությունը: Տարեցտարի այս մրցաշարի նկատմամբ մասնակից թիմերի հետաքրքրությունը նվազում է: Դա պայմանավորված է հիմնականում մրցաշարի անցկացման անհարմար ժամկետով: Հունվարին թիմերից շատերի համար նոր մրցաշրջանի նախապատրաստության փուլ է եւ նպատակահարմար չէ հանդիպումներ անցկացնել արհեստական խոտածածկով մարզադաշտերում: Ուստի պատահական չէ, որ այս տարվա մրցաշարից հրաժարվեց ոչ միայն Հայաստանի չեմպիոն «Փյունիկը»: «Համագործակցության գավաթի» մրցաշարը չհետաքրքրեց նաեւ առաջնության մրցանակակիրներ «Բանանցին» եւ «Ուլիսին»: Արդյունքում առաջին անգամ Հայաստանն այդ մրցաշարում ներկայացնելու է առաջնությունում 4-րդ տեղը զբաղեցրած «Միկան»:

Նշենք, որ բացի Հայաստանից, Սանկտ Պետերբուրգ չեն մեկնել նաեւ Ուկրաինայի չեմպիոն «Շախտյորը», Մոլդովայի ուժեղագույն ակումբ «Շերիֆը», իսկ Վրաստանը վերջին տարիներին ընդհանրապես հրաժարվել է մրցաշարի մասնակցությունից: Բացի այդ, ՌԴ չեմպիոն «Զենիթը» հանդես է գալու 2-րդ կազմով, նույնը վերաբերում է նաեւ «Շախտյորին» փոխարինած Կիեւի «Դինամոյին»:

Ինչ վերաբերում է «Միկային», ապա թիմը Սանկտ Պետերբուրգ կմեկնի այսօր իր մարտական կազմով: Պատվիրակության 33 անդամներից 19-ը ֆուտբոլիստներ են: Տեղում «Միկային» կմիանա Մոլդովայի «Շերիֆի» կիսապաշտպան Կոնստանտին Մանդրիչենկոն, որը փորձաշրջան կանցնի հայկական ակումբում: «Միկան» հիմնականում պահպանել է կազմը: Թիմը համալրել է «Փյունիկից» տեղափոխված պաշտպան Վահագն Մինասյանը: Թիմից հեռացել են Ուլիսես Մոնտենեգրոն, Ստեփան Հակոբյանը, Վիգեն Համբարձումյանը:

Քանի որ «Միկան» այսօր է ժամանելու Սանկտ Պետերբուրգ, ուստի ակումբի ղեկավարության խնդրանքով նույն օրը Ռիգայի «Սկոնտոյի» հետ կայանալիք հանդիպումը նշանակվել է Երեւանի ժամանակով ժամը 22-ին: Ինչ խոսք, ֆուտբոլիստների համար այնքան էլ հեշտ չի լինի մրցավայր ժամանելուն պես ասպարեզ մտնել: Սակայն ավելի դժվար կլինի հաջորդ օրը ժամը 14-ին Ղազախստանի «Տորպեդո» հետ կայանալիք խաղում, քանի որ «Միկայի» ֆուտբոլիստները չեն կարողանա լիովին վերականգնել ուժերը: Ամեն դեպքում, «Միկան» պետք է փորձի արժանավայել ելույթ ունենալ: Խմբային մրցաշարի վերջին հանդիպումը «Միկան» կանցկացնի հունվարի 18-ին Ուզբեկստանի չեմպիոն «Բունեդկորի» հետ: Նշենք, որ այդ թիմի կազմում կբացակայեն առաջատար մի քանի ֆուտբոլիստներ, որոնք Ուզբեկստանի հավաքականի կազմում մասնակցում են Ասիայի գավաթի խաղարկությանը:

Թեեւ «Միկան» առաջին անգամ է հանդես գալու «Համագործակցության գավաթի» մրցաշարում, սակայն թիմի 4 ֆուտբոլիստներ նման հանդիպումների փորձ արդեն ունեն: Նրանցից Աղվան Մկրտչյանը 2002-2006-ին «Փյունիկի» կազմում հանդես է եկել մոսկովյան 5 մրցաշարում՝ անցկացնելով 15 հանդիպում: Այս ցուցանիշով Աղվան Մկրտչյանը հայ ֆուտբոլիստների մեջ յուրօրինակ ռեկորդակիր է: «Միկայի» մյուս պաշտպանը՝ Ալեքսանդր Թադեւոսյանը կրկին «Փյունիկի» կազմում մասնակցել է 2004-2006-ին կայացած «Համագործակցության գավաթի» 3 մրցաշարի՝ անցկացնելով 9 խաղ: 2005-2006-ին այդ մրցաշարում «Փյունիկի» դարպասը պաշտպանած «Միկայի» ներկայիս դարպասապահ Գեւորգ Կասպարովը մասնակցել է 6 խաղի: Իսկ Հրայր Մկոյանը 2009-ին 3 խաղ է անցկացրել «Արարատի» կազմում:

«Միկան» Հայաստանի 8-րդ ակումբն է, որին բախտ է վիճակվում ներկայացնելու մեր հանրապետությունը «Համագործակցության գավաթի» մրցաշարերում: Առավել հաճախ՝ 9 անգամ այդ մրցաշարում հանդես է եկել «Փյունիկը»: Հայաստանի չեմպիոնը հայկական ակումբներից առավել հաջող է հանդես եկել «Համագործակցության գավաթի» խաղարկություններում: 3 անգամ փյունիկցիներն հաջողվել է հաղթահարել խմբային մրցաշարի արգելքը: 1997 եւ 2005-ին նրանք մտել են քառորդ եզրափակիչ, իսկ 2006-ին հասել են կիսաեզրափակիչ: Այդ տարի կիսաեզրափակիչում «Փյունիկը» պետք է մրցեր Բաֆվի «Նեթչիի» հետ, սակայն հրաժարվեց հանդիպումից, որի համար հայկական թիմին պարտություն գրանցվեց:

1999-2001-ին մրցաշարն անցկացվել է բարձրագույն եւ առաջին խմբերով: Հայաստանն ընդգրկվել էր առաջին խմբում: Երկու անգամ էլ մեր թիմերը (1999-ին՝ Արարատի «Ցեմենտը», 2001-ին՝ Երեւանի «Արարատը») հաջող ելույթների շնորհիվ բարձրագույն խմբի ուղեգիր են նվաճել:

«Համագործակցության գավաթի» նախորդ 18 խաղարկություններում Հայաստանի թիմերը հանդիպել են 13 երկրների 36 ակումբների հետ: Մեր թիմերն ընդհանուր առմամբ անցկացրել են 56 խաղ, որից 13-ում հաղթել են, 9-ն ավարտել են ոչ-ոքի, 34-ում՝ պարտվել են: Մեր ֆուտբոլիստները խփել են 75 գնդակ, բաց են թողել 122 գոլ:

Ռոգեն անհանգստացած է 2022-ի աշխարհի առաջնությունը ձմռանն անցկացնելու առաջարկից

ՄՕԿ-ի նախագահ Ժակ Ռոգեն կոչ է արել ՖԻՖԱ-ի ղեկավարությանը մինչեւ 2022-ի ֆուտբոլի աշխարհի առաջնությունը ձմռանն անցկացնելու որոշում կայացնելը բանակցել միջազգային օլիմպիական կոմիտեի հետ: Ռոգեի կարծիքով, բանակցությունների արդյունքում պարզ կդառնա, որ մրցաշարը ձմռանն անցկացնելը երկու կողմերի համար էլ ձեռնտու չէ: ՄՕԿ-ի նախագահը գտնում է, որ 2022-ի մարզական երկու խոշորագույն իրադարձությունները՝ ձմեռային օլիմպիական խաղերը եւ Քաթարում կայանալիք ֆուտբոլի աշխարհի առաջնությունը չպետք է միեւնույն ժամանակ անցկացվեն: Բացի այդ նա հիշեցրել է, որ Քաթարի հայտում հստակ գրված էր, որ ցանկանում է աշխարհի առաջնությունն անցկացնել հունիս-հուլիսին:

Բլաթերի կարծիքով, մրցաշարի անցկացման օպտիմալ ժամկետը դեկտեմբեր-հունվար ամիսներն են: Նա նշել է, որ թեեւ դեռ 11 տարի կա մինչեւ առաջնության մեկնարկը, սակայն պետք է այժմվանից գտնել օպտիմալ տարբերակը, որպեսզի չտուժեն ֆուտբոլիստները:

Ժակ Ռոգեի գլխավոր անհանգստությունն այն է, որ եթե 2 մրցաշարերն անցկացվեն միեւնույն ժամկետներում, ապա ՄՕԿ-ը խաղերի հեռարձակումից ստացվելիք գումարների զգալի կորուստ կունենա: Գաղտնիք չէ, որ ֆուտբոլի աշխարհի առաջնությունները զգալիորեն մեծ թվով հեռուստադիտողներ են հավաքում, քան ձմեռային օլիմպիական խաղերը: Սակայն եթե առաջնությունն անցկացվի Բլաթերի նշած ժամկետում՝ դեկտեմբեր-հունվարին, ապա Ռոգեն անհանգստանալու առիթ չպիտի ունենա, քանի որ սովորաբար ձմեռային օլիմպիադաները տեւում են 16 օր եւ անցկացվում են հունվարի վերջին կամ փետրվարին: Օրինակ 2010-ին Վանկուվերում կայացած ձմեռային օլիմպիադան անցկացվել էր փետրվարի 12-28-ը, իսկ Սոչիի օլիմպիական խաղերը կայանալու են 2014-ի փետրվարի 7-23-ը:

ՄՕԿ-ի նախագահը նաեւ տեղեկացրել է, որ 2020-ի ամառային օլիմպիական խաղերի մայրաքաղաքի ընտրության համար հայտերն ընդունվելու են մինչեւ այս տարվա սեպտեմբերի 1-ը: Ընտրությունը տեղի կունենա 2013-ի սեպտեմբերի 7-ին Բուենոս Այրեսում կայանալիք ՄՕԿ-ի նստաշրջանում: Ըստ նախնական տվյալների, պատրաստվում են հայտ ներկայացնել Հռոմը, Տոմբուլը, Բեռլինն ու Մադրիդը: Ընտրապայքարին կմասնակցի նաեւ Հնդկաստանը, սակայն դեռեւս հայտնի չէ քաղաքը:

ՀԱԽՄԱՍ

Մրցաշարում երկիբախանություն հաստատվեց

Հայաստանի շախմատի կանանց առաջնության 4-րդ տուրից հետո մրցաշարում երկիբախանություն հաստատվեց: 3-ական միավորով աղյուսակը գլխավորեցին Սիրանուշ Անդրեասյանը եւ Աստղիկ Մեսելջյանը: Անդրեասյանը հաշտություն կնքեց Շուշան Սարգսյանի հետ, իսկ Մեսելջյանը սեւերով հաղթեց հանրապետության չեմպիոնուհի Անահիտ Խառատյանին: Վերջինս մրցաշարում 2-րդ պարտությունը կրեց:

Առաջատարից կես միավորով հետ են մնում Շուշան Սարգսյանն ու Արմինե Բաբայանը: Վերջինս այս տուրում իր օգտին միավոր գրանցեց առանց խաղի: Նրա մրցակցուհին՝ մրցաշարի միակ գրոսմայստեր Նաիրա Մովսիսյանը, որը 3 անընդմեջ պարտություն էր կրել, հիվանդության պատճառով հանդիպմանը չէր ներկայացել:

2-ական միավորով հաջորդ տեղերում են Մարիա Գեւորգյանը, Նարինե Գասպարյանը, Անահիտ Խառատյանն ու Լիա Մարտիրոսյանը: Մարիա Գեւորգյանը հաղթեց Գասպարյանին, որն անդրանիկ պարտությունը կրեց: Մարիան հիանալի նվեր մատուցեց պապուն՝ մարզական լրագրող Դերենիկ Գեւորգյանին ծննդյան 83-ամյակի առթիվ: Մարտիրոսյանը հաշտություն կնքեց Վարդուհի Քալաշյանի հետ, որը 1 միավորով նախավերջին տեղում է:

Սվեշնիկովն ամրապնդեց առաջատարի դիրքը

Անդրանիկ Մարգարյանի շախմատի հուշամրցաշարի 7-րդ տուրում Հովհաննես Գաբուզյանը 2-րդ անընդմեջ պարտությունը կրելով՝ գործնականում զրկվեց գլխավոր մրցանակի համար պայքարելու հնարավորությունից: Գաբուզյանը սեւերով պարտվեց իրանցի Համեդ Մոսավիանին եւ 4 միավորով ընթանում է 4-րդ տեղում:

Իսկ ահա մրցաշարի միակ գրոսմայստեր Եվգենի Սվեշնիկովը հաղթելով Ռոբերտ Աղասարյանին, վաստակեց 5,5 միավոր ու ամրապնդեց առաջատարի իր դիրքը: Նա մրցաշարի ավարտից 2 տուր առաջ մեկ միավորով առաջ է անցել Նիկիտա Մատինյանից եւ Համեդ Մոսավիանից: Ռուսաստանը ներկայացնող Մատինյանը 7-րդ տուրում պարտության մատնեց Գրիգոր Դիլանյանին:

Ընդհանրապես 7-րդ տուրն արդյունավետ ստացվեց: Բոլոր 5 պարտիաներում էլ կողմերից մեկն իր օգտին հաղթանակ գրանցեց: Ռուսաստանցի Կիրիլ Ալեքսեենկոն հաղթեց Յուրի Համբարձումյանին, իսկ մրցաշարի հեռնաթափ Դավիթ Քալաշյանն անդրանիկ հաղթանակը տոնեց Դավիթ Շահինյանի հետ պարտիայում: Չնայած հաջողությանը, Քալաշյանը 1,5 միավորով եզրափակում է աղյուսակը:

Բաբուջյանի հաղթարշավն ընդհատվեց

Նյու Դելիի շախմատի մրցաշարի 8-րդ տուրն անհաջող էր Լեւոն Բաբուջյանի համար: 5 անընդմեջ հաղթանակներից հետո Լեւոնը սպիտակներով պարտվեց ուկրաինացի գրոսմայստեր Յուրի Կուզուբովին եւ 6 միավորով նահանջեց 17-րդ հորիզոնական: Դա հայ շախմատիստի 2-րդ պարտությունն էր: Առաջինը նա կրել էր ուկրաինացի Ալեքսանդր Արեշչենկոյից, որը մրցաշարի մասնակիցներից ամենաբարձր անհատական վարկանիշն ունի (2671):

8-րդ տուրից հետո միանգամից 6 շախմատիստներ գլխավորեցին աղյուսակը: 7-ական միավորով առաջատարներն են Պարիմարջան Նեգին, Լուկա Լենիչը, Ալեքսանդր Արեշչենկոն, Միխայլո Ալեքսիեենկոն, Կիդամբի Սունդարարաջանը եւ Յուրի Կուզուբովը: Մրցաշարի ավարտին մնացել է 3 տուր:

Մնաց մեկ քայլ

Արգենտինահայ թենիսիստ Դավիթ Նալբանդյանը շարունակեց հաղթարշավը Օֆլենդում ընթացող թենիսի մրցաշարում: Հաղթելով իսպանացի Նիկոլաս Ալմագրոյին (6-4, 6-2), Նալբանդյանը մտավ եզրափակիչ: Գլխավոր մրցանակի համար պայքարում նրա մրցակիցն իսպանացի Դավիթ Ֆեռերն է, որը կիսաեզրափակիչում հաղթել էր կոլումբիացի Սանտյագո Հիրալդոյին (6-3, 7-5):

Ռոբերտ Արզումանյանը մարզվում է «Սլյոնսկում»

Armsport.am-ի տեղեկացմամբ, ՀՀ հավաքականի պաշտպան Ռոբերտ Արզումանյանը, որ հանդես էր գալիս դանիական «Ռանդերսում», փորձաշրջան է անցնում լեհական Վրոցլավի «Սլյոնսկում»: Ըստ Արզումանյանի, կային առաջարկներ նաեւ մի քանի այլ ակումբներից, սակայն «Սլյոնսկն» ավելի լավ պայմաններ էր առաջարկել:

ՌԴ հավաքականը հավանաբար համալրեն ռուս «գերմանացիները»

Ֆուտբոլի ՌԴ հավաքականի գլխավոր մարզիչ Դիկ Ադվոկատը չի բացառել նախկին ԽՍՀՄ-ում ծնված եւ ներկայումս Գերմանիայում բնակվող մի քանի ֆուտբոլիստների ընդգրկումն ազգային ընտրանու կազմում: Խոսքը «Հաննովերի» ձախ պաշտպան Կոնստանտին Ռաուտեի, «Նյուրնբերգի» կենտրոնական պաշտպան Անդրեաս Վոլֆի եւ «Միլանի» կիսապաշտպան Ալեքսանդր Մերկելի մասին է:

«Նշված ֆուտբոլիստներն ինձ քաջատեղյակ են: Սակայն չգիտեի, որ նրանք առնչություն ունեն Ռուսաստանի հետ: Ուստի այսուհետ ավելի ուշադիր կհետեւեմ նրանց ելույթներին: Ինձ համար հաճելի է աշխատել այն ֆուտբոլիստների հետ, որոնք ընդունակ են ուժեղացնելու հավաքականի կազմը: Սակայն դեռեւս պետք է պարզել, թե արդյոք նրանք ունե՞ն ռուսական անձնագրեր, ի՞նչ են մտածում ՌԴ հավաքականում խաղալու մասին: Սանկտ Պետերբուրգում կհանդիպեմ Սերգեյ Ֆուրսենկոյի հետ եւ կքննարկեմ այդ հարցերը», նշել է Ադվոկատը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

Կաղանում ոսկի են փնտրում

Կհատվի 50.000 մրգատու ծառ, կվերանան հազվագյուտ կենդանիներ ու միջատներ

Կաղանի Շահումյանի հանքավայրի բաց շահագործման նախագիծը բնապահպաններն անվանում են մարդկանց եւ բնության դեմ բացահայտ ցեղասպանություն: Կաղանում օդի աղտոտվածությունը նորմայից գերազանցում է մի քանի անգամ: Բաց հանքի շահագործումը աղետալի կլինի տեղի բնակիչների համար: Շահումյանի հանքավայրի շահագործման համար «Դինո գոլդ մայնինգ» ընկերությունը մտադիր է հատել 50.000 ծառ, որոնց 90 տոկոսը մրգատու է, իսկ 20 տոկոսը գրանցված է Կարմիր գրքում:

«Էկոլոգիական անվտանգության ապահովման եւ ժողովրդավարության զարգացման« ՀԿ նախագահ **Արթուր Ղազարյանը** «**Ազգ**»-ի հետ զրույցում ասաց, որ տարիներ առաջ «Դինո գոլդ մայնինգ» ընկերության սխալ շահագործման հետեւանքով Շահումյան թաղամասում վերին շերտի հողերը հոսում էին, առաջանում էին հորեր, ինչից տները փլվում էին: «Այդ ժամանակ թաղամասի բնակիչները դատական գործ սկսեցին կազմակերպության դեմ, եւ ընկերությունը պարտավորվեց գնել բնակիչների բնակարանները»:

Հանքարդյունաբերության ոլորտի իրավունքի մասնագետի փոխանցմամբ՝ տարածքը կազմակերպության սեփականությունն է, սակայն դա չի նշանակում, որ նա իրավունք ունի այնտեղ մի քանի տասնյակ հազար ծառեր հատել: «Խոսքը չի վերաբերում մի քանի ծառի: Հատվող ծառերի թիվը հասում է 50.000-ի սահմանը, հետեւաբար դա ուղղակի վնաս է պետությանն ու շրջակա միջավայրին»:

Արթուր Ղազարյանի ներկայացմամբ՝ կազմակերպությանն օժանդակում է Սյունիքի տարածային բնապահպանական պետական տեսչությունը: Համաձայն օրենքի՝ պետք է համաձայնագիր կնքվի ընկերության, համայնքի եւ Սյունիքի տարածքային բնապահպանական պետական տեսչության միջեւ, որպեսզի հանքը շահագործվի: «Կաղանի քաղաքապետի վերաբերմունքը բաց հանքի շահագործման կապակցությամբ բացասական է: Կաղանցիները մտահոգված են եւ անհանգստացած: Ընկերությունն առաջարկում է որոշակի գումար տրամադրել այլ տարածքում ծառեր տնկելու համար, սակայն ծառ տնկելն ու կտրելը նույն հարթության մեջ չի կարելի գնահատել: Ավելի քան 15 տարի է անհրաժեշտ, որպեսզի տնկին ծառ դառնա»:

Մի քանի ամիս առաջ Կաղանի Լեռնաձոր համայնքում ուրանի հանքի շահագործման աշխատանքի հետ կապված քաղաքի ավագանին բացասական վերաբերմունք արտահայտեց եւ կանգնեց հասարակության կողքին:

«Ամենամիջը զարմանալի կլինի, եթե այս անգամ ավագանին ոչինչ չձեռնարկի: Եթե նրանք դեմ են ուրանի հանքերի շահագործմանը, ապա, տրամաբանորեն, պետք է դեմ լինեն նաեւ ոսկու բազմամետաղային հանքավայրի շահագործմանը բաց եղանակով: Որովհետեւ վնասը երկու պարագայում էլ հսկայական է»:

«Էկոլոր» հասարակական կազմակերպության նախագահ **Ինգա Զառաֆյանը** փաստում է, որ բաց հանքի շահագործման արդյունքում Կաղան քաղաքը կհայտնվի պայթեցումների, փոշու եւ տոքսիկ տարրեր պարունակող միլիոնավոր տոննա աղարների ազդեցության տակ: Դա առողջական լուրջ խնդիրներ կառաջացնի նաեւ հանքի շրջակայքում ապրող անձանց համար:

«Էկոլոգիական հասարակական դաշինքի» համակարգող **Սիլվա Ադամյանն** էլ փաստում է, որ Սյունիքը հանրապետության ամենավիրավոր մարզն է: «Լեռնաձորում ուրանի հանքի շահագործման հարց են բարձրացնում, Քաջարանում՝ պղնձամոլիբդենային կոմբինատ է գործում, եթե Շահումյանի հանքավայրի շահագործման բաց նախագիծն էլ դառնա իրականություն, Զանգեզուրը կհայտնվի սարսափելի վիճակում:

«Զանգեզուրը հարուստ է բուսական եւ կենդանական աշխարհով, մեծ մասը գրանցվել են համաշխարհային կարմիր գրքում: Կան հազվագյուտ միջատներ, որ միայն Հայաստանում են: Այդ հանքերի շահագործումը բառի բուն իմաստով ցեղասպանություն է բնության եւ մարդկության հանդեպ», հավելում է Սիլվա Ադամյանը:

«Էկոլոգիական հասարակական դաշինքի» անդամները մտադրվել են նամակ ուղարկել Կանադա՝ «Դինո գոլդ մայնինգ» ընկերության տնօրենությանը, Եվրոպական բանկին, որը ֆինանսավորում է ծրագրի մի մասը:

Նրանք նախատեսում են նաեւ բողոքի ակցիա անցկացնել Կաղանում եւ անտառում նստացույց կազմակերպել: Բնապահպանները անհանգստացած են, որովհետեւ, ըստ հաշվարկների, չի բացառվում, որ հանքում լինեն նաեւ ուրանի պաշարներ:

Թեպետ կառավարությունը չի հաստատել բաց հանքի շահագործման նախագիծը, սակայն բնապահպանները վարչապետ Վստահ են, որ փաստաթղթի տակ Տիգրան Սարգսյանի ստորագրությունը կհայտնվի: Որպեսզի ծառերը հատվեն, անհրաժեշտ է հողերի կատեգորիայի փոփոխման կառավարության որոշումը: Որոշումն ընդունվում է հետեւյալ ձեւակերպմամբ՝ հողատարածքը հանրային գերակա շահ ճանաչել:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գյումրին՝ ամենափոշոտ քաղաք

Ազգային վիճակագրական ծառայության փոխանցմամբ՝ Գյումրին Հայաստանի ամենափոշոտ քաղաքներից մեկն է: Համաձայն նոյեմբեր ամսվա օդային ավազանի մոնիտորինգի արդյունքների, քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է թույլատրելի նորմայի սահմանում:

Արարատ քաղաքում, որտեղ նույնպես գործում է ցեմենտի գործարան, օդում փոշու պարունակությունը նորմայից մի քանի անգամ բարձր է: Հետազոտությունները պարզել են, որ Հայաստանի՝ մեծությամբ երկրորդ քաղաքը ավելի փոշոտ է, քան ցեմենտի գործարան ունեցող Հրազդանը, որտեղ մթնոլորտային օդում ցեմենտի փոշու միջին ամսական կոնցենտրացիան դիտվել է թույլատրելիից բարձր պարունակություն, Վանաձորում՝ ծծմբի երկօքսիդի: Մասնագետները «սարսափելի» են համարում Ալավերդու վիճակը: Քաղաքում, ուր գտնվում է երկրի միակ պղնձաձուլարանը, ծծմբի երկօքսիդը նորմայից բարձր է 6.3 անգամ:

Հ. Հ.

Ադրբեջանական մտավորականությանն օգտագործում են «Ընդհատված երգը» ֆիլմի վարկաբեկման գործում

Ադրբեջանական 2 լրատվական գործակալություններ՝ Day.az-ը եւ Vesti. az-ը, հրապարակել են Ադրբեջանի անվանի արվեստագետների կարծիքները «Ընդհատված երգը» ֆիլմի վերաբերյալ: Ֆիլմի սյուժեն ամբողջովին աղավաղելով՝ գործակալությունները Ադրբեջանի մտավորականներին հրահրել են բացասական մեկնաբանություններ տալու:

«Ընդհատված երգը» հոգեբանական դրամայում հանգամանքների բերումով խոր հորում հայտնված հայն ու ադրբեջանցին արծարծում են 2 ժողովուրդներին հուզող միեւնույն հարցերը՝ սեփական տեսանկյունից:

«Ընդհատված երգը» ֆիլմը հիմա նկարահանվում է Մոսկվայում 21-30 տարեկան մի խումբ հայերի միջոցներով, պրեմիերան տեղի կունենա Մոսկվայում՝ մայիսի վերջին, իսկ գալիք երեքաբթի Մոսկվայում կլինի ֆիլմի պատշգամբային կայքի շնորհանդեսը:

Ֆիլմի ռեժիսորն է Արիկ Մանուկյանը, գլխավոր դերակատարն է Աշոտ Պողոսյանը:

Ի. Պ.

Անցյալ տարի աշխարհում 97 լրագրող է զոհվել

2010 թվականին զոհված լրագրողների ընդհանուր թիվն աշխարհի 30 երկրներում հասել է 97-ի: Այդ լրագրողներից 85-ը սպանվել են: Այս մասին նշված է Տեղեկատվական անվտանգության միջազգային ինստիտուտի (INSI) մամուլի տեղեկագրում: Ըստ «Արմենպրեսի»՝ այդ թիվը փոքր է 2009-ի ռեկորդային ցուցանիշից, երբ 12 ամսում զոհվել էր զանգվածային լրատվամիջոցների 133 աշխատակից, այնուամենայնիվ INSI-ին ընդգծում է, որ 2009 եւ 2010 թվականների միջեւ իրական տարբերությունն ամենեւին էլ մեծ չէ: Անցյալ տարի լրատվամիջոցների ավելի շատ աշխատակիցներ՝ 16 մարդ, զոհվել են Պակիստանում, իսկ Մեքսիկան եւ Հոնդուրասը, որտեղ 2010-ին սպանվել է տասական լրագրող, ճանաչվել են արեւմտյան կիսագնդում առավել վտանգավոր տարածաշրջանները ՁԼՄ-ների աշխատակիցների գործունեության համար: Ըստ INSI տվյալների՝ աշխարհում լրագրողների յուրաքանչյուր 10 սպանողներից դատական պատասխանատվության են ենթարկվում երկուսից էլ պակասը:

Ի. Պ.

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

ՄԱՇԱԽՈՍԱԿԱՆ

Խոսք անզուգական ընկերոջ մասին

Ասում են՝ չկան անփոխարինելի մարդիկ: Մենք՝ Հայաստանի դեմոկրատական կուսակցության անդամներս, գտնում ենք, որ կան:

Այդպիսին էր կուսակցության հիմնադիր անդամ, ՀԴԿ փոխնախագահ, անփոփոխամիտ ու կայուն հայրենասեր անհատ, երկրի, ժողովրդի ճակատագրով ապրող Ռաֆայել Վաչագանի Առաքելյանը:

Առանձնահատուկ էին նրա կազմակերպչական բացառիկ ունակությունները, որը նա անմնացորդ ի սպաս դրեց կուսակցության կայացման եւ ամրապնդման գործում:

Մենք կորցրինք անբասիր ու ազնիվ, հոգով հարուստ, սոցիալիստական գաղափարախոսությանն ու դրա կենսագործմանը մինչեւ կյանքի վերջը նվիրված լավագույն ընկերոջը:

Մենք միշտ հիշելու ենք մեր ընկերոջը: Ռաֆայել Առաքելյանի լուսավոր կերպարը մեզ կուղեկցի մեր ժողովրդի ծաղկման ու վերընթացի քաղաքական երազանքը իրականացնելու գործում:

ՀԴԿ հանրապետական խորհուրդ

L'Ambasciata d'Italia in Jerevan

indice pubblico concorso per la selezione di un impiegato a contratto, regolato dalla legge locale, da adibire ai servizi di Assistente amministrativo nel settore consolare/visti.

Il bando di concorso e' affisso all'albo dell'Ambasciata d'Italia, e consultabile sul sito internet www.ambjerevan.esteri.it

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Արագածոտնի մարզի Ղազարական համայնքում հողի սեփականատեր Հանրի Քոչարյանի՝ ոռոգման նպատակով սնորերկրյա ջրային ռեսուրսից 1,0 լ/վրկ ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձիք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին, ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. հունվարի 20-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

www.accea.info

Ժան եւ Ալբերտ Պողոսյան

2011-ին

ՆՈՐԱԲԱՐ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆԸ

Հետեւյալները՝

Հունվար **ՆՔԱԿ-ՊԱՆՈՑ** ՆՔԱԿ-ում ցուցադրված աշխատանքների ընտրանի
Փետրվար
Մարտ **ՆԱՐԻՆԵ ՋՈԼՅԱՆ** անհատական ցուցահանդես
Ապրիլ **ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ** խմբական ցուցահանդես
Մայիս **ԱԹԻԼԱ ԴՈՒՐԱՔ** (լուսանկարիչ/Թուրքիա)
ՄԵԿ ԿԱԴՐ - ՄԵԿ ՐՈՊԵ Հանրաշխարհային վիդեո/Կինո Փառատոն
Հունիս Ընթացքի մեջ է
Հուլիս Ընթացքի մեջ է
Օգոստոս **ՍՈՆԻԱ ՊԱԼԱՍԱՆՅԱՆԻ** հեղինակային, տարեկան խմբական ցուցահանդես
Սեպտեմբեր **ԼԻԶԱ Ս. ՇԹԻԲՈՐ** (Գերմանիա) Ինստալացիա եւ նկարչություն
Հոկտեմբեր **ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՀԱՍԱՐԱԿԱՐԳ** խմբական ցուցահանդես, համադրող է. Պալասանյան
Նոյեմբեր **ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ** խմբական ցուցահանդես համադրող Վիգեն Պալասյան (Ավստրիա)
ՄԵԿ ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ Փորձառական թատրոնի փառատոն
Դեկտեմբեր Ընթացքի մեջ է

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՈՒՏՔԵՆ ԱԶԱՏ է
Այցելություն ամեն օր բացի կիրակի եւ երկուշաբթի, ժամը 11:00-17:00
Փավստոս Բուզանդի 1/3 (Վերնիսաժի հարավ) հեռ. 568225

Ռիելտոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «ԱԴԱՄԱՆԴ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է «Ավանգարդ Ինվեստ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

Բնակարան, ընդ. մակերեսը՝ 80.88 քմ: Հասցե՝ք. Երեւան, Երեբունի վարչ. շրջ. Գ. Նժդեհի 58 շենք, բն. 1:

Մեկն. գինը՝ 21510000 դրամ:

Բնակելի տուն, ընդ. մակերեսը՝ 293,6 քմ եւ հողամաս՝ 0,123 հա: Հասցե՝ Կոտայքի մարզ, գ. Նոր Գյուղ, 18 փող., թիվ 20: Մեկն. գինը՝ 14280000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 15.02.2011թ-ից մինչեւ 30.12.2011թ. յուր. աշխ. օր ժ.11.00 - 17.00-ն: Լոտերը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեներում յուր. օր ժամը 11.00-ից – 20.00-ն: Աճուրդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ.ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնային առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել www.borsa.am :

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝14.1.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: